


16672

323.1  
G-23



308

շ-23

ԱԵՍՔԻ

~~36~~

ԱԶԳԱՅԻՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ

ԱԻՏՈՎՈՄԻԱՑԻ ՄԱՍԻՆ

3.07.2013

323.1

6-23

15 JAN 2010  
26 SEP 2006

ԱԵԱՔՈ

ԱՅ

ԱԶԳԱՅԻՆ-ԿՈԽԵՏՈՒՐԱԿԱՆ

35630

ԱԻՏՈՆԼՈՒՄԻՑԻ ՄԱՍԻՆ

682

այլ լուս | բժիռ յօթ և սերման ցրդա մայածյա բնա  
վաճայա ըթ լուսուս պատճեցան նաև պրոբռն  
և բահապահն պատճենան նախաք և նախա  
ուղարկ մի սխալուազ ամէ նուենաց մայապահն  
ուղարկ ըստ նախաթայան ուղարկ նահյու և աջր  
ուղարկ ուղարկ նախաթայան առ և աջրակ մի  
ուղարկ ուղարկ նախաթայան առ և աջրակ մի  
**ՅԱՄԱԶՄԱՐՍՆ** մի աղմաքանակ

«Նոր Հոսանք» ամսագրի 1913 թւի 1-ին և 2-րդ  
համարներում լոյս տեսան Դ. Անանունի յօդւածները՝  
«Ազգային հարցը և դեմոկրատիան» վերնագրով։ Մեր  
գրքոյկը մի պատասխան է այդ յօդւածներին։ Վաղուց  
է, որ այդ պատասխանը գրւած է, բայց «ինչ-ինչ»  
պատճառներով մենք միայն այժմ, աւելի քան մի տա-  
րի անցած, հնարաւորութիւն ունենք տպագրութեան  
յանձնելու ներկայ գրքոյկը։

Դ. Անանունի յօդւածների մէջ շօշափած հարցը՝  
ազգային-կուլտուրական աւտոնոմիայի մասին՝ ներթաշ  
կան հետաքրքրութիւն է ներկայացնում այժմ Ռուսաս  
տանում։ Այդ հարցի բազմակողմանի քննութիւնը մեծ  
կարևորութիւն ունի մասնաւորապէս հայ դեմոկրա-  
տիայի համար։ Մեզանում չկայ մի կուսակցութիւն՝  
կղերական թէ բուրժուական, «խաւարամիտ» թէ «ա-  
զատամիտ», որ կողմնակից չլինի ազգային-կուլտու-  
րական աւտոնոմիային։ Թէ տէրտէրական «Հովհանն»,  
թէ հայ վաճառականների օրդան «Մշակը» և թէ հայ  
մանր-բուրժուական ու քաղենական ինտելիգենցիայի  
բերան «Հորիզոնը»—բոլորն էլ հայոց ազգի փրկութիւ-  
նը տեսնում են այդ աւտոնոմիայի մէջ։

Դ. Անանունի յօդւածը մի անյաջող փորձ է հիմ-  
նաւորելու ազգային-կուլտուրական աւտոնոմիայի պա-  
հանը մարքսիստական տեսակէտից։ Մեր ժամանակ-  
ներում ինչ ասէք, որ չեն փորձում արդարացնել մարք-  
սիզմով և ով ասէք, որ իրեն մարքսիստ չի յայտարա-  
րում։ Առանձնապէս տղեղ ու այլանդակ ձեւը է ըն-  
դունել մարքսիզմի շահագործումը «Մշակում» աշխատող  
մի խումբ անսկզբունք գրողների կողմից, որոնց գլուխ  
է անցած Բախչի Խլիանեան կոչւող մի բախտախնդիր։  
Բարոյական ամենատարրատկան սկզբունքներից զուրկ

այդ քրէտական տիպը հանդէս է եկել նորից հայ ընթերցողի առաջ «մարքսիստի» անունով։ Այդ պարոնը այնքան է կապւած ժամանակակից բանւորութեան ազատագրական շարժման հետ, —բարոյապէս թէ իրապէս, —որքան Տիբետի Դալայ-Լաման։ Բայց տեսէք, թէ ինչպէս է նա կուրծք ծեծում «Մշակի» էջերում հաւատացնելու միամիտ հայ ընթերցողին, թէ նրա բերանով խօսում է ինքը Կարլ Մարքսը։

Որպիսի՞ գառն հեղնանք, ամենամաքուր գործին մօտենում են ամենակեղաստ ձեռքերը։ Եւ ցաւալին այն է, որ գտնուում են մարդիկ, որոնք հաւատում են այդ գրական աֆերսիստին և գաղափարական մարդ են համարում նրան։ Որքան ախուր վկայութիւն է այդ հայ ընթերցող հասարակութեան և հայլական գրական բարքերի մասին։

Մենք դեռ առիթ կունենանք, երկի, խօսելու թէ այդ պարոնի և թէ նրան «համբերողաբար» ձեռք մեկնող և նրա հետ միասին «Մշակում» աշխատող միւս «մարքսիստ» կոչեցեալների մասին։ Մենք այստեղ օգտը ւում ենք միայն առիթից՝ զդուշացնելու ում հարկն է, որ հալած իւղի տեղ չընդունեն ամեն մի անդից վեր կացող և իրեն «մարքսիստ» յայտարարող պարուների ազակակները։ Հարկաւոր է անխնայ հարւածել ու հաւածել մարքսիզմը շահագործող ու ապականող այդ հախիներին։

Եւ հարկաւոր է հարւածել ու հալածել նրանց ոչ միայն նրա համար, որ նրանք շահագործում են ու ապականում այդ մեծ ուսմունքը, այլ և յանուն գրական բարքերի մաքրութեան առհասարակ, յանուն Բեշկան, Զերնիշեսկու մեղ թողած սրբազն գրական աւանդների։ Գրականութիւնը մի տաճար է, ուր կաշըլի է մտնել միայն մաքուր խղճով և ազնիւ միտումներով։ Իսկ երբ մարդիկ մօտենում են այդ տաճարին մասն փառասիրական տեսչերով, շահագիտական նպատակներով և խորհրդական հակումներով, —դա ամենամեծ ոճագործութիւնն է, որ կատարում է ժողովրդի գէմ։

Դ. Անին մենք չենք գասում այստեղ Բախչիների թւում։ Մենք նրա հետ սկզբունքային վէճ ենք մզում ցոյց տալու համար, որ նա իր աշխարհայեացգով և իր առաջադրած ազգային ծրագրով հեռու է

մարքսիզմից որ նա, ըստ ամենայնի, մի սոսկ նացիոնալիստ է։ Դրա հետ միասին, —և այդ ամենից զլիս ւորն է մեզ համար, որովհետեւ Դ. Անի գրական-հասարակական դէմքը ինքնըստինքեան հետաքրքրութիւն չի ներկայացնում, —մենք ուզում ենք ցոյց տալ որ ազգային-կուլտուրական աւտոնոմիան մի վասակարու յետաղիմական պահանջ է։

Թէ որքան յաջողւում է մեզ այդ անել թողնում ենք դատելու ընթերցողներին։

ԱԵԱՔՍ

10 յունիսի 1914 թ.

ուղարք բնա մի շիշական առ առ յո ըստից առաջ  
ամբ պիտի քա և առաջանի ու առ առ և առաջաց  
առաջ-առաջ կը մ. և առելոց զանու զի և առ  
միջի առաջապահ առաջապահ զի առել առաջաց  
յո ըստ ըստ զի և առաջ զան- և առաջապահ Ա  
զանանի մի առաջանու մասու ուղարք միջամ  
և համար առաջապահ առ

Համբարձութեան քառ տար է և հարցունակ պահը է այս գիտութեան մասին աշխատավոր աշխատավոր աշխատավոր աշխատավոր աշխատավոր

ա վաճառվունք է ու զամ երացաւ զամ բայ  
առան միջառ թիվ ուղարկած և նաև ոչ բայ ու  
գոյալիք և քար զամ ուղարկարդանք դժ  
ուզ ուղարկած և դա օգտագործած զամ այս  
տեսք մարտնչուց այսպիս և մարտնչուց մարտ  
ուզու մաս մայիսի մարտնչուց առ ըստ տարբ  
րժակ պայմանագրային մաս մարտնչուց ու  
ԱԶԳԱՅԻՆ-ԿՈՒՆԴԱՒՐԱԿԱՆ ԱԽՏՈՆՈՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ  
նարդար միջարա պարբայնուու օրուն դժ և այս  
ու ուրա բայ զամ ուղարկած և նախագործ դժ և  
ուղարկած մայիսունու և նախագործ զամ ուղա

Դ. Անանունը իր յօդւածի վերսագիրը դրել է.  
«Ազգային հարցը և գեմոկրատիան»: Ամենից առաջ  
հարց է ծագում՝ ո՞ր գեմոկրատիայի մասին է խօսքը:  
Մենք գիտենք երկու տեսակ գեմոկրատիա: Մէկը, ինչ-  
պէս ասում են ռուսները, քրոստուական  
մարքսիստական լեզով, — նշանակում է բուրժուական  
գեմոկրատիա: Այդ գեմոկրատիան ձգտում է կիրառել  
ժողովրդապետութեան (գեմոկրատիայի) սկզբունքները  
միայն քաղաքական կարգերում: Մոցիալական խնդիր-  
ներում բուրժուական գեմոկրատիան պահպանողական  
է, նա կանգնած է մասնաւոր սեփականութեան և վար-  
ձու աշխատանքի հողի վրայ: Իր ամենաբարձր իդէալը՝  
գեմոկրատական հանրապետութիւնը՝ նա ցանկանում է  
և կարող է իրագործել իր ազգութեան կամ պետու-  
թեան սահմաններում: Այդ և մի շարք ուրիշ պատճառ-  
ներով բուրժուական գեմոկրատը, ինչպէս և առհասա-  
րակ ամեն մի բուրժուական իդէոլոգ, ազգային բնոյթ  
ունի, նա միշտ, աւելի կամ պակաս չափերով, հակած  
է դէպի նացիոնալիզմը:

Այլ բան է, ի հարկէ, ըստնորական՝ դեմոկրատիան: Բոլոր ազգերի, «առնւազն բոլոր քաղաքակիրթ երկրների ջանքերի միացումը առաջին պայմանն է պլորետարիատի ազատազրութեան համար», —ասում են իրենց «Մանիֆեստի» մէջ մեր մեծ ուսուցիչները: Սյդքանը բաւական է համականալու համար, որ բանւորական դեմոկրատիան ամենից առաջ միջազգային է այդ բառի ամենաընդարձակ մտքով:

Արդ՝ մենք հարցնում ենք, որ գեմոկրատիայի անունից է խօսում Դ. Անանունը: Եթէ առաջին տեսակի գեմոկրատիայի անունից, մենք գուցէ և չվիճէինք նրա հետ: Մենք կասէինք գուցէ, որ Դ. Անանունը բաւական հետևողական է, որպէս բուրժուական գեմոկրատ: Բայց նա, անշուշտ, յաւակնութիւն ունի խօսելու բանւորական գեմոկրատիայի անունից: Այստեղ արդէն մենք նրան ասում ենք, սխալըում էք, բարեկամ, Զեր ամբողջ մտածելակերպը ազգային հարցում և Զեր առաջարկած «համադարձանը» այդ հարցը լուծելու համար՝ հակասում են բանւորական գեմոկրատիայի սկզբունքներին, նրա աշխարհայեացքին, նրա գծած ճանապարհին:

Նախ և առաջ՝ մարքսիզմը չունի և չի կարող ունենալ ոչ մի «համադարձան» ազգային հարցի համար: Մարքսիզմի համար գոյութիւն չունի, եթէ կուզեք, մի ազգային հարց. նա ճանաչում է ազգային հարցեր: Այսինքն՝ ազգային հարցը մարքսիզմը լուծում է ամեն մի առանձին դէմքում իր ուրոյն և կոնկրետ պատմական արտայայտութիւնների մէջ և ոչ «ընդհանրապէս», անկախ ժամանակի և տեղի պայմաններից: Պարզենք մեր միտքը:

Իր երկու յօդւածները «Նոր Հոսանքի» մէջ Դ. Անը եղբափակում է հետևեալ խօսքերով. «Վերջացնենք: Ազգային հարցն անկարելի է անդիտանալ: Նա միշտ պէտք է զգացնել տայ իրեն: Կապիտալիստական հասարակարգի մէջ նրա լուծումը պիտի փնտուել ազգային կուլտուրական աւտոնոմիայի մէջ»:

Կարճ և ազդու, —կարելի է ասել Դ. Անի այս վճռական յայտարարութեան համար:

Առաջին մտքի հետ, —որ «ազգային հարցն անկարելի է, անդիտանալ», ինչպէս անկարելի է անդիտանալ, կաւելացնենք մենք, կանանց հարցը, կրօնների կամ, ուրիշ խօսքով, խորի ազատութեան հարցը և այն, —այդ մտքի հետ մենք համաձայն ենք: Թէև այդ էլ որոշ վերապահումով: Դ. Անը, թւում է, թէ պիտի գոհ լինի, որ այդ այդպէս է, որ «ազգային հարցը միշտ պէտք է զգացնել տայ իրեն»: Իսկ մենք, ընդհանրապէս, մենք գտնում ենք, որ ինչքան քիչ «զգացնել տայ»

իրեն ազգային հարցը, այնքան աւելի լաւ: Բայց այս ի միջի այլոց:

Դառնանք երկրորդ կէտին: «Կապիտալիստական հասարակակարգի մէջ (ազգային հարցի) լուծումը պիտի փնտուել ազգային-կուլտուրական աւտոնոմիայի մէջ»: Այստեղից մենք տեսնում ենք, որ Դ. Անը ուզում է «լուծել» ազգային հարցը ոչ թէ մի որևէ է ազգի, օրինակ՝ հայերիս համար, ոչ նոյն իսկ մի որևէ է պետութեան, օրինակ՝ Ռուսաստանի համար այլ «ընդհանրապէս»: Նա մի ընդհանուր զեղատումն է գրում ամբողջ կապիտալիստական աշխարհի համար:

Ով քիչ թէ շատ ծանօթ է նացիոնալիզմի էռւթեան և պատմութեան հետ, նա գիտէ, որ նացիոնալիզմի ընորոշ առանձնայատկութիւնը կայանում է հէնց նրանում, որ նա ցանկացել է միշտ ազգային հարցը լուծել ընդհանրապէս, անկախ իր առանձին կոնկրետ արտայայտութիւնից: Նացիոնալիզմի հիմնական սկզբունքն այն է, թէ ազգութիւնը մի անհատականութիւն է, որը հարկաւոր է միշտ և ամեն կերպ, ինչ գնով էլ լինի, պահպանել և զարգացնել. որ ազգութիւնը հասարակական-քաղաքական կենակցութեան ընական ույսիտենական ձևն է. որ ազգութիւնը միշտ իրեն ամբողջութիւն (կամ «ազգովին», —ինչպէս ասում է Դ. Անը) պէտք է տնօրինէ իր հասարակական կեանքը:

Մեկնելով այդ հայեացքից, հետևողական նացիոնալիզմը յայտարարում էր. «ամեն ազգութիւն պէտք է պետութիւն լինի»: Այդ նշանաբանը հնչում էր եւրոպայում բոլոր բուրժուական յեղափոխութիւնների ժամանակ և այդ ունէր, ի հարկէ, իր պատճառները:

Յայտնի է, որ միջնադարեան ֆէոդալական եւրոպայի համար պետութեան բնորոշ ձեր ցեղային պետութիւնն էր ու պլեմենու գումարութեան բարձրացնելու մասնաւութեան էր բազմաթիւ մասր ցեղական միութիւնների, որոնց իւրաքանչիւրի գլուխ էր անցած առանձին ցեղական ֆէոդալական իշխան: Բուրժուական Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան և այլն, առաջացան իւրաքանչիւրը 5—10 և աւելի ցեղային պետութիւններից: Մանր ցեղական մարմինները իրենց անխուսափելի մաքսային պատճեններով և փոխադարձ անվերջ կուներով ու երկպառակութիւններով ձեռնտու չէին

բուրժուազիայի համար. նրան հարկաւոր էր, ըստ կարելոյն, ընդարձակ ներքին շուկայ և, ըստ կարելոյն, մեծ և ուժեղ պետութիւն՝ արտաքին շուկայում մըցելու համար. Դրա համար բուրժուազիան միացնում էր հարեւան՝ ընդհանուր ծագում ունեցող և, ամենից առաջ, միևնույն լեզով խօսող ցեղերը և կազմում էր նրանցից ազգային պետութիւններ. Այս հանգամանքը դրեց իր կնիքը բուրժուական իդէոլոգիաների մտածողութեան վրայ. Պատմական տեսակէտը (խտորիզմը) ընդհանրապէս օտար էր նրանց համար. Ինչպէս մասնաւոր սեփականութիւնը, —որովհետեւ նա ձեռնառ էր բուրժուազիային, և ժամանակին ունէր խոշոր առաջադիմական նշանակութիւն ամբողջ հասարակութեան համար, —յայտարարեց այդ դասակարգի իդէոլոգիաների կողմից «բնական» և «յաւիտենական» հաստատութիւն, նոյնպէս ազգային պետութիւնը բուրժուական իդէոլոգիաներին թուում էր բոլոր դամանակների համար ցանկալի ու «բնական» պետական ձև: Այստեղից էր, որ ծնունդ առաւ բուրժուական նացիոնալիզմը իր վերև յիշած ֆորմուլով՝ թէ ամեն ազգութիւն պէտք է պետութիւն լինի, կամ ամեն պետութիւն պէտք է ազգային լինի:

Բայց եթէ ժամանակին այդ ֆորմուլը ունէր իր որոշ դրական պատմական նշանակութիւնը, յետապայում նա ցոյց տւեց իր հակասական ու երթեմն բէտակցիոն բնաւորութիւնը: Նախ և առաջ անկարելի եղաւ բոլոր պետութիւնները սահմանադեկ ըստ ազգութիւնների: Nationalstaat-ների կողքին ստեղծւեցին Nationalitätenstaat-ները, այսինքն՝ ազգային պետութիւնների կողքին՝ մի քանի ազգերից բաղկացած պետութիւններ, ինչպէս օրինակ՝ Աւստրիան, Շվեյցարիան: Բացի այդ՝ կապիտալիստական մըցութեան ու նւաճումների համար հիմնած ազգային պետութիւնը, չնորհիւ հենց այդ մըցութեան և նւաճումների քաղաքականութեան, ժամանակի ընթացքում, բնականաբար, պէտք է ամփոփէր իր մէջ և ոտար ազգութիւններ, և պէտք է դառնար այցպիսով իր կատարեալ հակատիզը:

Եթէ հետզհետէ վերև յիշած նւաճողական քաղաքականութիւնը, կապիտալիստական փոխանակութեան դարձացումը, միջազգային գաղղթականութիւնները —

ակներեւ դարձրին մաքուր ազգային սահմանագծումների անկարելիութիւնը, նացիոնալիզմը ստիպւած էր զիջել: Նա չէր պահանջում այլքս, որ մի քանի ազգերից բաղկացած պետութիւնների մէջ իւրաքանչիւր ազգ անջատւի և ատանձին պետութիւն դառնայ: Բուրժուական կուսակցութիւնները գոհանում էին այժմ, պահանջելով, որ ազգերը պետութեան ներսում սահմանագծւեն և կապւեն միմեանց հետ ֆեղերատիւ կապերով: «Դէպի ֆեղերացիա», —այդ էր այժմ նացիոնալիստների գէվլիզը, նրանց նոր «ընդհանուր», և կզբունքային» լուծումը ազգային հարցի: Մի աստիճան էլ զիջում է նացիոնալիզմը, երբ, նոյն տնտեսական էւլիցիայի շնորհիւ, ֆեղերալիստների կողքին երեան են գալիս աւտոնոմիաները: Սրանք էլ առաջադրում են, իրեւ ընդհանուր, վերացական սկզբունք, որ խառը պետութիւնների մէջ ամեն ազգութիւն աւտոնոմ լինի իր ազգային-քաղաքական կեանքում:

Այժմ մենք ականատես ենք նացիոնալիզմի մի նոր թուչքին... վերից դէպի վար:

Տնտեսական գրգացումը այժմ միանգամայն ակներեւ է դարձրել ամեն տեսակ «կղզբունքային» սեպարատիզմի, ֆեղերալիզմի և աւտոնոմիզմի անհեթեթութիւնը: Ազգերը այնքան են խանուել իրար, որ չկան այլքս ազգային տերրիտորիաներ, որոնց սահմաններում կարելի լինէր հեղատութեամբ հիմնել ազգային ֆեղերատիւ կամ աւտոնոմ մարմիններ: Իսկ տերրիտորիան ներկայումս ինքնուրոյն քաղաքական կեանքի անհրաժեշտ հիմքն է: Ի՞նչ անել ուրեմն: Թւում է, թէ ազգային տերրիտորիայից զրկելուց յետոյ, այսպէս ասած՝ «հողը» իր ոտքերի տակ կորցնելուց յետոյ, նացիոնալիզմը պէտք է հոգին աւանդեր: Բայց... ու Եղիշեած անունում ազգային ազգականութեան հիմքն է, որ ամեն մի պէտք ինքնուրոյն կերպով, «ազգութիւն» անօրինէ իր ամբողջ հասարակական քաղաքական կեանքը, հարկաւոր է փրկել զննէ այն, ինչ որ կարելի է եթէ ըլ կայ այլքս ազգային տերրիտորիա, կայ ազգային լեզու, «ազգային կուլտուրա»: Եւ առաջ է գալիս մի նոր «ընդհանուր», և ամեն անդ ասում է նոր նացիոնալիզմը, —ուր կողք-կողքի, միեւ

նոյն պետութեան սահմաններում ապրում են մի քանի ազգութիւններ, ամեն ազգութիւն պէտք է աւտոնոմ լինի ազգային-կուլտուրական գործերում:

Այս վերջին տեսակի նացիոնալիզմը ամենից առ հեթեթ և վատառողջ նացիոնալիզմն է: Բայց այդ մասին յետոյ: Առայժմ մենք ուզում ենք անել միայն այն, որ Դ. Ա. Ն. Ը. ինչպէս և նրա աւտորիացի ու հրէայ ուսուցիչները, ընկնում են նացիոնալիզմի ճանկը հենց այն բոպէին, երբ նողատակ են դնում «ընդհանրապէս» լուծել ազգային հարցը, երբ նրանք փնտռում են մի համար: «Համադարձան» բոլոր ազգերի, բոլոր գէպքերի համար:

Մարքսիստի համար բոլոր վերև յիշւած միջոցները՝ ազգային հարցը լուծելու, կարելի է ասել, հաւասար չափով և՛ ընդունելի են և՛ անընդունելի, նայած —ինչպէս ասացինք վերելու ժամանակի և տեղի պայմաններին: Լինում են գէպքեր, երբ մենք կողմնակից ենք մի որևէ ազգութեան կատարեալ անջատման: Կամ կողմնակից ենք ֆեղերացիայի, աւտոնոմիայի: Կարող է պատահել, գուցէ, իրերի և գէպքերի այնպիսի դասաւորութիւն, որ մենք ստիպւած լինենք հաշտւելու նոյն խոկ ազգային-կուլտուրական աւտոնոմիայի պահանջի հետ մի որևէ ազգութեան վերաբերմամբ: Բայց մի ընդհանուր և անկախ սկզբունք ազգային հարցը լուծենած համար, ինչպէս, օրինակ, այն, թէ ամեն ազգութիւն պէտք է պետութիւն լինի, կամ թէ՝ ամեն ազգութիւն պէտք է պետութիւն լինի, իր ազգային գորգութիւն «ազգութիւն» պէտք է վճռէ իր ազգային գործերը, — այդ տեսակ սկզբունք մեզ համար գոյութիւն չունի:

Մենք ունենք միայն մի հատ ընդհանուր և պարտադիր սկզբունք, մի հիմնական կշռաշափ: Դա մարդկութեան տնտեսական զարգացման և առաջարկմութեան շահներն են, որոնց հետ ներկայում ներքին, անբաժանելի կապով կապւած են: Բայց դասակարգի միջազգային տղատութրական շարժման շահները: Այդ է գերագոյն սկզբունքը, մեր կրիտերիումը: Այդ սկզբունքի տեսակէտից 60-ական թւականներին ցանկալի էր կենաստանի անջատումը Ուսուաստանից, և կ. Մարքսը գլուխ անցած «Բանւորների Միջազգային Ընկերութեան» ողջունում էր անկախ կենաստանի մարտիկներին: 1905 թւին գա կը նշանակէր ջատել համառուստական դեմոկրատիայի ուժերը և վնասի ազատութեան գործին ընդհանրապէս:

սական և քաղաքական յարաբերութիւնների \*), բայց ուրների ազատազրական դատի համար աւելի ձեռնուտու էր կենաստանի սերու կապը Ուսուաստանի հետ, և մարքսիստները ու ամենից առաջ իրենք լին մարքսիստները՝ դէմ էին կենաստանի անջատման: Նոյնը մեր հիմնական սկզբունքի տեսակէտից ցանկալի է, օրին., ներկայում Բալկաննեան ազգերի ֆեղերացիան, և մենք ասում ենք կեցցէ այդ ֆեղերացիան: Բայց միացեալ Ուսուաստանի բաժանումը մի քանի ֆեղերատիւ մարմինների մենք գտնում ենք վասակար, և մենք վճռականապէս հակառակ ենք այդ գէպքում ֆեղերացիային:

Ի հարկէ, միջազգային բանուրական շարժման շահների տեսակէտից, եթէ ընդհանուր առմամբ դատելու վիճակը, աւելի ցանկալի է և անհրաժեշտ ազգերի ըստ կարելոյն աւելի սերտ մերձեցումը և միութիւնը: Եւ մենք ահմանում ենք, որ անտեսական զարգացման տարրելային պրոցեսը բնական անհրաժեշտութեամբ աւելի ու աւելի մօտեցնում է իրար առանձին ազգերը: Այդ պատճառով անջատման պահանջը մենք կարգ ենք պաշտպանել միայն բացասիկ գէպքերում: Աւելի յաճախ մենք կողմնակից ենք ազգերի մերձեցման և միութեան: Եւ այդ երեխն նոյն խոկ այն գէպքերում, երբ մերձեցումը գուցէ սպանում է մի որևէ է ազգութեան՝ ձուլելու միւս ազգութիւնների հետ:

Մենք վախենում ենք, որ Դ. Ա. Ն. Ը. վերջին խօսքերը կարգավիս իր հրէայ բարեկամների նման սար-

\*) Այդ փոխած յարաբերութիւնները կայանում են ամենից առաջ նրանում, որ այժմ գոյութիւն չունի արդէն ինքը լինական «լինախտան», այն ժամանակակից յեղափոխական դասակարգը: Դրա տեղը բնուել է բուրժուազիան, որը ընաւ տրամադիր չէ մտածելու անջատման մասին, որովհետեւ համայն Ուսուաստանը շատ ձեռնուու շուկայ է նրա ապրանքների համար: Փոխել է նաև այն, որ նախկին յեղափոխական կենդրուն վարչական զիջել է իր տեղը Պետերբուրգին: 60 թւականներին կենաստանի անջատումը կը նշանակէր ուժեղ հարած հասցնել ասիական գեղագութիւն ու պատար կանգնել նրա դէմ յանձին մի նոր կուտարական պետութեան: 1905 թւին գա կը նշանակէր ջատել համառուստական դեմոկրատիայի ուժերը և վնասի ազատութեան գործին ընդհանրապէս:

սակով վեր թռչի տեղից և աղաղակի. «ուրեմն դուք  
ասսիմիլեատորներ էք...»: Այս, բարեկամո, կը կակա-  
յեցք, մենք ոչինչ չունենք նոյն իսկ ասսիմիլեացիայի  
դէմ, եթէ այդ վիճակած է այս կամ այն փոքրիկ աղ-  
գութեան, և եթէ այդ կատարում է, ի հարկէ, ոչ թէ  
բութեան, այս կատարում է, ի հարկէ, ոչ թէ  
բութեան, այլ աղաղական զարգացման ձա-  
նապարհով:

Երկի շատ տարեր են մեր մտածողութիւնները,  
այնպէս չէ, պ. Անանուն: Ի՞նչ արած: Նացիոնալիզմի  
և խոտերնացիոնալիզմի միջն սարեր ու ձորեր կան:  
Մտքի այն ստորոտներից, որտեղ դուք կանգնած էք,  
մինչև մարքսիզմի բարձունքները՝ ուստի ու աղաղական զարգացման ձա-  
նապարհով:

Երկի շատ տարեր են մեր մտածողութիւնները,

## II կոմ Անա Աղաղական աշակերտական մաս

Բայց դառնանք ազգային-կուլտուրական աւտոնո-  
միայի պահանջին: Ծեսնենք մօտիկից, ի՞նչ է ներկա-  
յացնում այդ պահանջը: Մենք ուզում ենք, որ այդ  
պատմէ մեզ ինքը Դ. Ա. Այդ գուցէ մի քիչ երկար  
լինի, բայց թող ներեն մեզ ընթերցուները. մենք կու-  
լինի, որ նրանք անմիջապէս Դ. Ա. Այդ լսէն, թէ  
զէինք, որ նրանք անմիջապէս Դ. Ա. Այդ լսէն, թէ  
ի՞նչ է մեր սոցիալ-նացիոնալիստների պահանջը, նրանց  
ճոր խօսքը» ազգային հարցում:

Դ. Ա. Ա. իր յօդւածի մէջ վիճակագրական թւեր  
է բերում կովկասեան ազգաբնակութեան մասին և ա-  
պացուցանում է, որ հայերը, վրացիները, թուրքերը,  
պատմականները այնքան են խառնւած իրար, որ անկա-  
լեռնականները այնքան են խառնւած իրար, որ անկա-  
լեռնականները կովկասը ազգային տերրիտորիաների,  
որպէսզի հնարաւոր լինէր տալ նրանց տերրիտորիա-  
կան աւտոնոմիա կամ ֆեռերացիա և այդ ձևով լուծել  
ազգային հարցը կովկասում:

«Ուրեմն ի՞նչ անել, — հարցնում է Դ. Ա. Ա., — որ  
մալով ազգութեան գործօն անդամ չը դրկւենք միւս  
բարիքներից: Ինչպէս անել, որ չը սահմանափակւի  
հայի բնակութեան վայրը և միւսոյն ժամանակ էլ չը  
իզի նրա ազգային կապը: (Ընդգումը մերն է:  
Աեաքս):

Եւ նա պատասխանում է: «Այս նպատակներին  
համեմու համար ազգային միութեան հիմք պիտի ըն-  
դունել ոչ թէ տերրիտորիայի սկզբունքը, այլ ազ-  
գային պատկանելութեան զիտակցութիւնը (Ընդգծողը  
ինքը Դ. Ա. Ա. է): Դա ունի այն առաւելութիւնը, որ  
ազգութեան յատկացը ած գործերի բնագաւառում հնա-  
բաւորութիւն է տալիս արտայայտելու իւրաքանչիւր  
ազգայինի (լաւ խօսք է՝ «ազգայինի», ականջդ կանչի,  
Պարոնեան):

Այդպիսի ազգային միութիւնը, — շարունակում է  
Դ. Ա. Ա., — գերազանցապէս նման կը լինի եկեղեցու  
կազմակերպութեան: Եկեղեցու պէս նա էքս-տերրիտո-  
րիալ և անձնային կը լինի, սակայն իր շուրջը կը  
միացնէ ոչ թէ կրօնական, այլ ազգային պահանջների  
համար....: Պետութեան իւրաքանչիւր քաղաքացին ա-  
զատ կը լինի անդամակցելու այս կամ այն հաւաքա-  
կան մարմին, բայց վերջինս պիտի ճանաչւի, որպէս  
պետական գործառնութիւն կատարող կազմակերպու-  
թիւն (այսինքն՝ ազգային միութիւնը պէտք է լինի ոչ  
թէ մասնաւոր — իրաւական, այլ հրապարակական —  
իրաւական ինստիտուտ: Ա.): Պետութիւնը իր և նրա  
մէջ պիտի բաժանէ հասարակական աշխատանքը: Ան-  
տարակոյս դա կը կատարվի այնպիսի եղանակով, որ  
ազգային-կուլտուրական համարւած բոլոր գործերի ղե  
կավարութիւնը կանցնի ազգային միութեան: Այս վեր  
ջինն էլ կունենայ թէ իր տեղական և թէ կենդրուա-  
կան հաստատութիւնները, որոնց կազմակերպման գոր  
ծը կը յանձնաւ տեսալ ազգի անդամներին: Անշուշտ,  
պետութիւնը իրեն կը վերապահէ ազգային կազմա-  
կերպութիւնների գործունէութեան վերահսկողութիւնը  
(միթէ, ինչքան զիջող է Դ. Ա. Ա.): Նա վերահսու կը  
լինի նրանց կուլտուրական գործունէութեան բովան-  
դակութեանը, բայց (?) այնուամենայնիւ անխախտելի  
կը մնայ այն գրութիւնը, որ տւեալ ազգի կուլտուրա-  
կան գործերը տարւում են նոյն այդ ազգի ներկայա-  
ցուցչութեան: միջոցով . . . այ քեզ «վերահսկողու-  
թիւն», դուք շատ խորամանէ էք եղեք, պ. Ա. —  
սուտ միթարանքներ էք յօրինում ձեր հակառակորդ  
ների համար), որ կուլտուրական ինդիբների մէջ ազ  
գերը սահմանագծում են (ոտմежեվայութեան, — ինքը Դ.

Անս է բերում փակագծում ոռուսներէն այս խօսքը) ի-  
շարից և թուլացնում են բաղվածն կէտերը (միթէ.  
բայց այդ բաւական չէ միայն առել, պ. Անուն, այդ  
հարկաւոր է ապացուցել, որովհետեւ մինչև այժմ մենք  
կտարեալ հակառակն ենք տեսել: Մենք տեսել ենք,  
որ ազգերի «սահմանագծումը», մեկուսացումը, խոր-  
թացումը ուժեղացնում է և ոչ թէ թուլացնում ազ-  
գային բաղկումները և թշնամութիւնը):

Սրանից յետոյ Դ. Անը հարց է տալիս. «Ի՞նչ բո-  
վանդակութիւն պիտի դնեն իրենց գործունէութեան մէջ  
ազգային միութիւնները: Մենք ասացինք՝ պա-  
տասխանում է նա, — ազգային-կուլտուրական: Իսկ դրա  
մէջհասկանում ենք այս բոլոր կրթական հաստատութիւն-  
ների և բարեմասնութիւնների գարգացումը, որ կատ-  
ւած է ինքուրոյն ինքու անարգել գործածման և իրաւո-  
հաւասարութեան հետ: Արդային-կուլտուրական ինքնօ-  
րինութիւնը կընձեռէ ազգերին կրթութիւն ստանալ հա-  
րազատ լիզուլ, ունենալ սեփական թատրոն (!), գրա-  
դարձներ (!, ուսումնարանական հաստատութիւններ  
դարձներ (!!), թանգարաններ (!!!), և այլն,  
և ընկերութիւններ (!!!), թանգարաններ (!!!!) և այլն,  
և առնասարակ այն բոլորը, ինչ գալիս է նպաստելու  
մի լիզուլ գարգացման գործին, լիզուլ, որովհետեւ մենք  
սրա մէջ ենք տեսնում ուրոյն ազգային կուլտուրան»:

Մի հարց էլ և կարեոր հարց. «Ո՞րտեղից պիտի  
հայթայթեն ազգային հաստատութիւնների համար  
անհրաժեշտ միջոցները: Գետական բիւզէից: Իրավան-  
շիւր ազգութիւն՝ ըստ իր քանակի՝ պետութիւնից կը  
ստանայ գիտական ձեռնութիւն»:

Ահա թէ ինչ բան է «ազգային-կուլտուրական  
աւտոնոմիան»: Առաջին հայեցքից կարող է թւալ որ  
մեր նացիստալ-սոցիալիստները ըստ էութեան մի «հա-  
մեսաւանդ միայն ունեն. յանձնել դպրոցական  
մեսաւանդ միայն ունեն. յանձնել դպրոցական  
զուրծը առանձին ազգերի իրաւութեան: Միւս կոն-  
ցիւր պահանջների մասին—գրադարաններ, թանգա-  
րեալ պահանջների մասին—կապահաններ, ի հարկէ, իո-  
րաններ, հնադարաններ և այլն—չարժէ, ի հարկէ, իո-  
րաններ: Այդ բոլորը Դ. Անը շարում է միամիտ ընթիր-  
ուել: Այդ բոլորը Դ. Անը շարում է միամիտ ընթիր-

որ նրա առաջադրողները ազգասէր տիրացուներ են, և  
երկրորդ՝ Դ. Անի բերած նկարագրութիւնից և բացա-  
տրութիւններից մենք տեսնում ենք, որ ազգային Շներ-  
կայացուցչութիւնները նրա հասկացողութեամբ կոշ-  
ւած են շատ աւելի լայն ու կարեւոր գեր խաղալու աղ-  
գերի հասարակական քաղաքական կենսաքում: Այդ տե-  
սակէտից պէտք է ասել, որ Դ. Անը բաւական... ան-  
կեղծ է: Հազիւ թէ նրա ամենաոփերիմ թշնամին կա-  
րողանար աւելի դաւաճան լիզուլ, աւելի մատնող ոճե-  
րով ձեակերպել ազգային-կուլտուրական աւտոնոմիայի  
նացիոնալիստական պահանջը:

Եթէ Դ. Անի վերև բերած առղերը կարգայ մի  
որևէ ազգային «վարժապետ», որը տապակւել է միշտ  
իր սեփական իրում և որի համար «ազգասիրութիւնը»  
հանարակական գիտակցութեան ամենաբարձր ձևն է,  
որ նա կարող է երկակայել, այդ «վարժապետը», երե-  
ւի կը հիանայ Դ. Անի «առողջ» մտքերով և կը զմայ-  
լի նրա գծած հեռանկարով: Ազգային ներկայացուց-  
չութիւն, տեղական և կենցունական հաստատութիւն-  
ներ, պետական բիւզէ և, որ գլխաւորն է, գրադա-  
րաններ; հնադարաններ...»

Բայց մի գիտակից բանուոր, մի մարքսիստ, որ  
թօթափել է իրենից ազգային մշուշապատ մտածողու-  
թեան և նախապաշարմունքների լուծը, որը գէթ մի  
բոպէ շնչել է միջազգայնութեան մաքուր օգը, — այդ  
տողերը կարգալիս՝ ձեռքբ կը մօանցնի քթին, որպէս  
զի չպայ նացիոնալիզմի խեղող օղը:

Դ. Անին տանջում է ամենից առաջ մի հոգի.  
ինչպէս անել որ «չը խուի հայի ազգային կապը»: Նա  
չի հոգում այն մասին, թէ ինչպէս անել, որ լաւոյն  
կերպով միանան, «կապէւն» հայ բանուրները իրենց  
ուուս, վրացի, թուրք և այլ ընկերների հետ, որպէս զի  
նրանք միացած ոյերով կուեն յանուն իրենց մեծ ի-  
դէալների: Նրան չի զբաղեցնում բանուրների միջազ-  
գային, լաւամկարգային կապը: Նա հոգում է ամենից  
առաջ, որ «չը խուի հայ բանուրին հայ բոլորուայի  
ու հայ տէրտէրի հետ միացնող կապը: Դարձեալ պէտք  
է առենք, որքան տարբեր ենք մտածում մենք և Դ. Անը: Մենք կարծում ենք, որ մարքսիստը ամենից առ-  
աջ պէտք է հոգայ բանուրների գասակարգային կա-

հօօց  
35632

պի մասին, և եթէ այդ կապի յաջողութիւնը և ապահովութիւնը սպառնում է վնասել որևէ է ազգային կապի, սպառնում է «խոել» այդ կապը, — նա դրա դէմ ոչինչ չը պէտք է ունենայ: Եւ մենք տեսնում ենք, որ յաճախ այդպէս էլ լինում է. դասակարգային կապը վնասում է ազգային կապին, դասակարգային գիտակապին ազգային կապին, դասակարգային գիտակապին ազգային ինքնազիտակցութեան: Իսկ Դ. Ա. կարծիքով, ամենից առաջ՝ ազգային կապ: Ի՞նչո՞ւ. որովհետև «ազգութեան պատկանելը — ըստ Դ. Ա. կարծիքով կցութեած անհատականութիւն է» (կեցցէ «մարգարիտարք»...), որովհետև Դ. Ա. կ նրա ընկերների հինգ շատ տարօրինակ տրամարանութեամբ՝ բանւորներին առնասարակ ըստ ազգութիւնների բաժանելը նշանակում է լաւագոյն կերպով միացնել նրանց:

Բերենք մի օրինակ ուրիշ «բնագաւառից»: Միջին դարերում հրէայ ազգը խիստ հալածանքների էր ենթարկում Եւրոպայում: Հրէաների համար որոշւած էին յայտնի քաղաքամասեր, «գետաօներ», որտեղ նըստարունք ունեին բնակւելու: Նրանք պարտաւոր էին առանձին զգեստներ ունենալ, որոշ նշաններով՝ որպէսզի ամեն ոք խսկոյն կարողանար ճանաչել հրէային և ցոյց տալ նրան «արժանի» արհամարհներ և տեղութիւն: Դա մեծապէս նպաստում էր հրէաների ազգային կապի պահպանման: Երբ տեղի ունեցաւ ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը և Եւրոպայում հաստատեցին ազատ գեմոլգատական կարգեր, հրէաները դուրս եկան իրենց «գետաօներից» և ձուլեցին ֆրանսիացիների ու գերմանացիների հետ: Նրանք «իշպեցին» իրենց ազգային կապը և գարձան սոսկ քաղաքացիներ իրենց պետութիւնների մէջ:

Դ. Ա. ը, հետևողական լինելու համար, պէտք է ցաւ զգայ, որ այդ այդպէս է եղել: Զէ որ նա կուզէր անշուշտ ֆրանսիական հրէաներին էլ «ընձեռնել» ազգային-կուլտուրական աւտոնոմիա... Իսկ մենք չենք ցաւում ամենին:

Նոյնը և Ռուսաստանում. Եթէ չը լինէր համառուսական «գետաօն», չերտա օչնձուստիւնը, հրէաները կիսով չափ գուցէ արդէն ձուլւած լինէրն ուրիշ ազգերի հետ, բայց այժմ,

շնորհիւ այդ չերտա-ի, նրանց մէ շատ ուժեղ է ազգային կապը: Դ. Ա. ը պէտք է գոն լինի, որ այդ այդպէս է, իսկ մենք գոն չենք: Ի հարկէ, Դ. Ա. ը նոյնաքան հակառակ է ազգային բռնութիւններին, որքան և մենք, բայց արի ու տես, որ բռնութիւնը յաճախ շատ ձեռնուու է նրա «ազգային կապի» համար, մինչդեռ ունիմուկրատիան երբեմն անխորհորէն խղում է այդ կապը: Ի՞նչ կամէ այդ մասին Դ. Ա. ը:

Ոչ, ազգային կապի անպայման պահպանումը ինքն ըստ ինքեան երբէք չի կարող իդէալ լինել մեզ համար:

### III

Շարունակենք: «Մեր նպատակներին հասնելու համար, — ասում է Դ. Ա. ը, — ազգային միութեան հիմք պիտի ընդունել ոչ թէ տերրիտորիայի սկզբունքը, այլ ազգային պատկանելութեան գիտակցութիւնը»:

Օ՛, երկինք, ի՞նչ տեսակ մեռեներ է հարկաւոր կենդանացներ, որպէս զի Դ. Ա. ը համար իր նպատակներին:

Ազգային պատկանելութեան գիտակցութիւնը, ուրիշ խօսքով՝ ցեղական-ազգակցական սկզբունքը (принципъ родства) եղել է հասարակական միութեան հիմք անզրջընեղեղեան ժամանակներում: Այն օրւանից, երբ գոյացել են առաջին պիտութիւնները՝ մարդկային նոյն խսկ հասգոյն անցեալում այդ սկզբունքը զիջել է իր տեղը հարկաւութեան կամ տերրիտորիայի սկզբունքին:

«Գետութեան առաջին տարերութիւնը տոհմական կազմից այն է, որ քաղաքացիները պետութեան մէջ բաժանում են ըստ տերրիտորիայի», — ասում է Ֆր. Էնգելսը\*): Եւ զա հասարակական գիտութիւնների այլուրէնն է: Պետական իրաւունքի, սոցիոլոգիական թէ պատմական ինչ ձեռնարկ էլ վերցնելու վիճէ, դուք կը Կարգաք ամեն տեղ, որ հին թափառական շընանում հասարակական միութիւնների հիմ-

<sup>1)</sup> „Происхождение семьи, собственности и государства“.

քը եղել է ցեղական-ազգակցական կապը: Այդ կապը  
պահպանել է որոշ չափով իր նշանակութիւնը և այն  
ժամանակ, երբ մարդիկ, թէս անցել են նստակեաց-  
հողագործական կեանքի, բայց ապրել են բնական  
տնտեսութեան ըլջանում՝ առանձնացած ու ինքնամ-  
փոփ ցեղական-տոհմական համայնքներով: Բայց այն  
օրից, երբ առաջ է գալիս փոխանակութիւնը, զարդա-  
նում են արհեստներն ու վաճառականութիւնը, ծնունդ  
է առնում աշխատանքի բաժանումն ու դասակարգային  
շերտաւորումը և այդ բոլորի շնորհիւ անհրաժեշտորեն  
սկսում է պետական կեանքը,—ազգակցութեան սկզբ-  
րունքը կորցնում է իր նշանակութիւնը և զիջում է իր  
տեղը, ինչպէս ասացինք, հարեւանութեան կամ տեր-  
րիուրիայի սկզբունքին:

Որպէսզի աւելի հասկանալի լինի մեր առածը, կը  
բերենք մի պատմական օրինակ: Այդ օրինակը կը  
հարկաւորի մեզ զուցէ յետագայում և ուրիշ եղան-  
կացութիւնների համար:

Հին Աստիկան (**Աթէնքը**), մօտաւորապէս վեց  
տար Քրիստոսից առաջ, բաղկացած է եղել չորս առան-  
ձին ցեղերից, որ կոչւել են Փիլամենի: Իւրաքանչիւ-  
ծին Փիլամենից է երեք ստորաբաժանում, որ կոչւել են  
Փիլամենի: Իսկ իւրաքանչիւր Փրատրի բաղկացած է  
եղել տասը և աւելի տոհմիքից \*), որ կոչւի են Մոթիք-  
ներ: Բոլոր հասարակական գործերը վճռելիս են եղել  
արինակցական սկզբունքի վրայ հիմնած այդ միու-  
թիւնները: Նախ՝ իւրաքանչիւր տոհմ առանձին, իւրեւ  
ինքնիշխան հասարակական միաւորներ, իսկ յետոյ նը-  
րանց ներկայացուցիչների (եւպատրիքների) ժողով-  
ները: Մեր յիշած ժամանակներում, շնորհիւ արհեստ-  
ների և ներքին ու արտաքին վաճառականութեան զար-  
նութիւն առաջական առաջական առանձին, այդ տոհմերն  
քացման, այդ տոհմերն ու ցեղերը, որոնցից իւրա-  
քանչիւրը ունէր մինչև այդ իր սեփական աստածնե-  
քանչիւրը ունէր մինչև այդ իր սեփական աստածնե-  
քանչիւրը լինի լինքնութիւն կեանքը, սկսել էին  
ը, ընդհանրապէս իր ինքնուրոյն կեանքը, սկսել էին  
իւրանուել: Բացի այդ առաջ էր եկել մի բաւական ստաւո-  
ր առանձին ապահովութիւն (ստրուկներ, իրաւագուրկ «մետել»  
ազգաբանակութիւն (ստրուկներ), իրաւագուրկ «մետել»  
ներ), դաշնակից ժողովուրդներից եկտորներ), որին

\*) Տոհմ բառով մենք թարգմանում ենք ուստերէն քօթ-ը  
կամ լատինական ցան:

տոհմական կազմը տեղ չէր տալիս իր մէջ: Այդ ժա-  
մանակ տեղի ունեցան Սոլոնի և ապա կլիստենէսի  
նշանաւոր բեֆորմները, որ դարձրին Աթէնքը դիմո-  
կրատական պետութիւն:

Ինչում էին կայանում այդ բեֆորմները:

Կիսթենէսը բաժանեց Աստիկան տասը մեծ տեր-  
րիուրիական շրջանների, որոնցից իւրաքանչիւրը իր  
հերթին բաժանում էր մասը տեղական շրջանների,  
որ կոչում էին վեմեր (Ճեմու): Նախկին տոհմերն ու  
ցեղերը իւրաքէ չ'ոչնչացան միանդամից: Նրանք շարու-  
նակում էին իրենց գորութիւնը նախ՝ որպէս որոշ էտ-  
նոլոգիական միաւորներ և ապա՝ հասարակական տե-  
սակէտից էլ՝ նրանք կազմում էին որոշ կրօնական  
միութիւններ: Կլիսթենէսը թողել էր նրանց իրաւա-  
սութեան տակ նաև ընտանեկան բնաւորութիւն կրող  
մի քանի գործեր, ինչպէս, օրին, նորածինների ներ-  
մուծումը ընտանեկան մատեանների մէջ:

Խակ ըաղարական տեսակէտից, այսինքն վարչա-  
կան, գատարանական և զինուրական գործերը վարե-  
լու, պետական պաշտօնեաններ նշանակելու, արտաքին  
քաղաքականութիւնը զեկավարելու համար և այն,—  
նշանակութիւն ունէին միայն այդ նոր շրջաննային  
կամ տեղրրիտորիական միութիւնները (որ նման էին  
մեր այժմեան տեղական և շրջանային ինքնավարու-  
թիւններին): Ազգակցական կապը կորցրեց իր հըապա-  
րակական, հասարակական-քաղաքական նշանակու-  
թիւնը: Ամեն մի աթէնացի հանդէս էր գալիս այժմ  
ոչ որպէս ամենից առաջ այս կամ այն ցեղի կամ տոհմի  
անդամ, այլ իրեւ սոսկ քաղաքացի (գրաջданին): Այդ  
բեֆորմն էր հէնց, որ ոչնչացնելով ցեղային կազմի  
հետ արխատկրատիայի արտօնութիւնները և հաւասար  
իրաւունքներ տալով ամբողջ ժողովրդին (զեմոսին),—  
դարձրեց Աթէնքը դեմոկրատական պետութիւն:

Այդպէս մերս կապով կապւած է դեմոկրատիայի  
գաղափարը աերթիառիայի գաղափարի հետ: Դեմո-  
կրատիան յաղթանակում է, երբ «ազգային պատկանե-  
լութեան ակզրունքը» զիջում է իր տեղը տերրիտո-  
րիայի սկզբունքին:

Եւ միայն Աթէնքում չէ, որ այդպէս է եղել  
Ճիշտ միենոյն բանը տեղի է ունեցել նաև Հոռվմում:

Սերբիոս Տուլոսի ըեփորմների ժամանակ. միևնոյնը տեղի է ունեցել և յետագայում՝ միջնադարեան և նոր Եւրոպայում, երբ գերմանական ու լաւոնական ցեղերից առաջ էին գալիս ժամանակակից ազգային պետութիւնները\*):

Եթէ վերցնենք այժմեան մի քանի ազգութիւններից բաղկացած պետութիւնները, մենք կարող ենք ասել—ի հարկէ, որոշ վերապահումներով, որոնց վրայ այստեղ չենք կարող կանգ առնել,—որ ազգերը բոնում են այդ պետութիւնների մէջ նոյն տեղը, ինչ որ Աթէնքում և միւս յիշած գէպքերում բոնում էին ցեղերը:

Ի հարկէ, այդ ազգերից մէկը կամ միւսը կարող է որոշ պայմաններում գերազանել անշատւել միւս ազգերից (ինչպէս այդ կարող էր անել և մի առանձին ցեղ Աթէնքում), բայց եթէ նրանք կապւած են միւմեանց հետ և ուզում են ապրել ընդհանուր պետական կեանքով, այդպիսի գէպքերում դեմոկրատիայի հիմնական պահանջն է, որ ազգային կապը դադարի հաս-

\*) Զարդացման այդ ճանապարհը, տոհմ-ցեղ-ազգութիւն, ընդհանուր է եղել բոլոր ժողովուրդների համար (տես այդ մասին Մ. Կովակսկու «ՌօծօՅ ՑՈՒ» աշխատութիւնը), Այդ գիտը արևել է պատմական գիտութիւնների մէջ ոչ այնքան հեռու անցեալում, և այս ունեցել է անգին նշանակութիւն: Ի միջի այլոց, այդ գիտի և նրա խելացի կիրառման շնորհիւ է, որ Թր. Էնդիւսին յաջողւել է տալ պետութեան ծագման ու զարգացման իրական պատկերը (տես նրա «Պրօսէօջանէ սեմի, սօստինութեանութեան»): «Օտքրիտէ րօդա, — տառմէ է մի տեղ Պէխանութը, — իմ էլո ունեցու այս առաջականութեան համար առաջական պատմական ներկայացուցիչների Ելլինէկ, Դայսի, Հսմեն, իր պատօնական ներկայացուցիչների Ելլինէկ, Դայսի, Հսմեն, վիլտոն և այլն—չի կարողանում ուրուս գալ անբովանդակ ու վերացական ֆորմունների, դատարկ արտարկցիւնների շրջանից, հետեւանք է հենց այն բաժին, որ նա չի ըմբռնում և չի գործ դադում վերոյիշեալ գիտի շնորհիւ հնաբաւոր գարձած սօցիալ գենետիկական մեթոդը: Այդ մեթոդով առաջնորդուողը հետառագական կ հասկանայ, ի միջի այլոց, որ հասարակական-պետական մերի զարգացումը (տոհմ-ցեղ-ազգութիւն), համեմելով ազգային պետութեան, չի կանգ առնում այդ կետի վրայ, ինչպէս այդ թւում է նացիստականներին: Ժամանակակից անտերական պարզացումը և ժամանակակից գեներատիան ստեղծում են արդէն մեր աշխերի առաջ նոր պետական ձեւը, որոնք բացատրվում են նացիստական փորձուների:

սարակական-քաղաքական գործօն լինելուց: Պետութեան իւրաքանչիւր հպատակ պէտք է լինի ոչ թէ ամենից առաջ այս կամ այն ազգի անդամ, այլ սոսկ քաղաքացի անկախ իր ազգային ծագումից, ինչպէս այդ լինում է, օրինակ, անկախ կրօնից կամ սեռից: Ինչպէս ցեղերը Աթէնքում, կիսթենէսի ըեփորմից յետոյ, գարձան մասնաւոր իրաւունքի սուրբիեկտոներ, նոյնպէս մասնաւոր-իրաւական և ոչ քաղաքական բնաւորութիւն պէտք է ունենան առանձին ազգային հաստատութիւնները ներկայ խառը պետութիւնների մէջ: Եւ հէնց այդ է, որ պահանջում է ամենից առաջ ժամանակակից պետութիւններց հետեւողական բանւորական դեմոկրատիան:

Բայց գառնանք Դ. Ա.-նին: Ի՞նչ է պահանջում նա: Դրա կատարեալ հակառակը, Հարկաւոր է տոերբիստիայի սկզբունքի տեղ ընդունել ազգային պատկանելութեան գիտակցութիւնը»: Դ. Ա.-նը, դեմոկրատիա ասելով, հասկանում է այն, ինչ որ տրամագծօրէն հակառակ է դեմոկրատիային. «Նոր» սկզբունքների անւան տակ նա մեղ հրամցնում է հին ու փթած սկզբունքներ. երևակայելով, թէ մեղ առաջ է տանում, նա ուզում է շրջել պատմութեան անիւը հարիւրաւոր և հազարաւոր տարիներ գէպի յետ:

Դ. Ա.-նը հաւատացնում է մեկ, որ ազգերը ուզում են «ազգովին» տնօրինիլ իրենց վիճակը: Նախ պէտք է ասենք, որ Դ. Ա.-նը իզուր է այդքան հաւատ ընծայում ազգային տիրացուներին: Այդ նրանք են, որ ցանկանում են «ազգովին» տնօրինել հայի ապագան: Եւ երկրորդ՝ Եթէ մանր ազգերի տիրացուական, պահանողական տարբերը ուզում են պահանանել հինը, ազգայինը, զա շատ բնական և հասկանալի է:

Միթէ դուք կարծում էք՝ նոյն հին Աթէնքում փիլաներն ու ֆրատրիները հեշտութեամբ էին հրաժարում իրենց ցեղական անհաւականութիւնից յօդուտ դեմոկրատական ամբողջութեան: Կիսթենէսի ըեփորմները ունէին ուժեղ հակառակորդներ:

Եթր Աթէնքում հաստատեցին դեմոկրատական կարգեր, — պատմում է մի տեղ էնզէլսը, — տոհմական կարգի օրգանները կորցրին իրենց հրապարակական նշանակութիւնը և իջան մինչև մասնաւոր միութիւնների ու կրօնական համայնքների աստիճանը: Բայց

հին կարգերի բարոյական ազդեցութիւնը երկար ժամանակ նկատում էր աթէնացոց աշխարհահայեցքի մասնակ շատ դանդաղ կերպով նա դուրս էր մըդմէջ, և միայն շատ դանդաղ կերպով նա դուրս էր մըդմէջ, և մտածողութեան նոր եղանակով: Նախին կարգեց ազդում էին նոյն իսկ յետապայ պետական հաստարը ազդում էին նոյն իսկ յետապայ պետական հաստարը տութիւնների վրա»: «Եւ պէտք է յիշել — ասում է նոյն էնդէլսը մի այլ տեղ, — թէ որպիսի յամառ ու երկարատ կույց յետոյ հարևանութեան սկզբունքը տարաւ իր յաղթանակը Աթէնքում և Հոռվմում արիւնակցական կապերի դէմ»:

Արժէ, որ Դ. Անը մի փոքր մտածէ այս տողերի վրայ:

Դ. Անը իր յօդւածում խօսում է մի տեղ պատմութեան «կենդրոնածիգ և կենդրոնախոյս ոյժերի» մասին: Յայտնի չէ, թէ նա ինքը ինչ է հասկանում այդ բառերի տակ, բայց ձիշտ է, որ այդ երկու ոյժերը միշտ գուգացնում են իրար պատմութեան մէջ իրեւ անհաշտ ախոյեաններ:

Տոհմերի ու ցեղերի մէջ եղած աւելի զրկւած ու չքաւոր տարրերը, — ստրուկները, իրաւագուրլ «մհտեկչ» մի խօսքով նրանք, որոնք կողմնակից եին Աները», մի խօսքով նրանք, որոնք կողմնակից եին այդ թէնքում կլիսթենէսի բեֆորմին, — կազմում էին այդ ժամանակւայ պատմութեան կենդրոնածիգ զօրութիւնը: Տոհմական ու ցեղական արխստոկրատիան՝ «եւնը», մի խօսքով շահագրգուած էին պահպանելու պատրիդները, որոնք շահագրգուած էին կազմում էին կարգերը և կուռում էին կլիսթենէսի դէմ, — կազմում էին պատմութեան կենդրոնախոյս զօրութիւնը:

Նոյն այդ երկու ոյժերի կոխւը — մօտաւորապէս նոյն ձեռվ — կարելի է դիտել և Հոռվմում և ամեն տեղ, ուր մարդիկ ցեղական կեանքից անցնելիս են եղեւ պիտական կեանքին:

Կենդրոնածիգ ոյժերը եղել են միշտ երկրի առաջադիմական ոյժերը, որոնք ձգտել են ստեղծել նոր, աւելի բարձր հասարակական ձեռք: Կենդրոնախոյս ոյժերը՝ պահպանողական ոյժեր, որոնք պաշտպանել են հինը նորի դէմ, մասնաւորը ընդհանուրի դէմ:

Եթէ աւելի մօտ դիտելու լինքնք այդ ոյժերը և փորձենք հասկանալ նրանց յաւիտենական կոխւը, որ այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր մենք կը կապահարակիցները պահանջում են «ազգովին» տնօղինել միայն ազգային-կուլտուրական գործերը և ոչ ամբողջովին ազգերի հասարակական-քաղաքական կեանքը, ինչպէս այդ պէտք է պահանջէր զուարիւն նացիոնալիստը: Այդ առարկութեան դէմ մենք պէտք է ասենք նախ՝ որ մեր աւտանոմիստները շատ արհեստական կերպով նեղացնում են «կուլտուրա» հասկացողութեան սահմանները, և երկրորդ՝ որ նրանք չեն բաւականանում իրենց գծած սահմաններով և թէ անսակտում, թէ գործնականում շատ ուժեղ տեսդենցներ ու

Աթէնքում դա դեմոկրատիայի կոխւն էր արիստոկրատիայի, տոհմական ազնւականութեան դէմ, Հռովմում — պլեբէյների կոխւը՝ պատրիկների դէմ, եւրոպական պետութիւններում — բուրժուազիայի կոխւը ֆէոդալական իշխանների դէմ, և այլն:

Դառնանք այժմ Դ. Անին, կենդրոնածիգ, թէ կենդրոնախոյս ոյժերին է նա կողմնակից: Կլիսթենէսի, թէ նրա հակառակորդների բանակում է կամսպնած նաև:

«Մեր անսակէտն է, — ասում է Դ. Անը, — որ ազգային խնդիրներում ազգերը պէտք է սահմանագծւեն իրարից»: Նա ուզում է, որ ազգերը «ազգովին» վըճռեն իրենց գործերը, նա ցանկանում է ամեն կերպ պահպանել և ուժեղացնել ազգային բաժանումները: Ազգային միութիւնները պէտք է լինեն ոչ թէ մասնաւոր-իրաւական, այլ «ալետական գործառնութիւն կատարող», այսինքն՝ քաղաքական հաստատութիւններ, «Պետութիւննը պէտք է իր և նրա (ազգի) մէջ բաժանէ հասարակական աշխատանքը»...

Այս բոլորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ինքը լեզու առած «կենդրոնախոյս զօրութիւնը» ժամանակակից պետութեան մէջ, ինքը բուրժուական նացիոնալիզմը՝ ուղղած պրոլետարական ինտերնացիոնալիզմի դէմ, որ ներկայ պատմութեան «կենդրոնածիգ զօրութիւն» է

Դ. Անանունը կարող է մեղ առարկել, թէ ինքը և իր գաղափարակիցները պահանջում են «ազգովին» տնօղինել միայն ազգային-կուլտուրական գործերը և ոչ ամբողջովին ազգերի հասարակական-քաղաքական կեանքը, ինչպէս այդ պէտք է պահանջէր զուարիւն նացիոնալիստը: Այդ առարկութեան դէմ մենք պէտք է ասենք նախ՝ որ մեր աւտանոմիստները շատ արհեստական կերպով նեղացնում են «կուլտուրա» հասկացողութեան սահմանները, և երկրորդ՝ որ նրանք չեն բաւականանում իրենց գծած սահմաններով և թէ անսակտում, թէ գործնականում շատ ուժեղ տեսդենցներ ու

նես՝ որքան կարելի է աւելի լայնացնելու «ազգային միութիւնների» իրաւասութիւնը:

Ճիշտ է սակայն, որ այժմեան մեր ազգային կուլտուրական աւտոնոմիաները հին տեսակի նախ ու աշկարայ նացիոնալիբատներից չեն: Այդ տեսակի պարզամիտ և թէօրիայի մէջ հետեւղական նացիոնալիստներ գտնելու համար հարկաւոր է այժմ հնագիտական պեղումներ անել: Կատարելապէս կոյր ու բթաշմիտ պիտի լինի մէկը, որպէսզի հանդէս գայ ՀՀ դարում յայտարարելու, թէ անհըսածիշտ է, որ ամեն ազգութիւն պետութիւն դառնայ կամ նոյն իսկ միայն գումաննի, թէ հարկաւոր է եքստերիտորիական ազպահանջի, թէ հարկաւոր է ապրութիւնը տալ գային-քաղաքարական կատարեալ, ինքնօրինութիւն տալ մի պետութեան մէջ ապրող բոլոր ազգերին: Չեն մի պետութեան մէջ ապրող բոլոր ազգերին: Եթէ ազգութիւնը հաս սարակական կենսակցութեան և քաղաքական կեանքի «բնական» ու «յաւիտենական» ձեւն է:

Նացիոնալիզմը, ինչպէս ամեն մի պարտւած և մահւան դատապարտւած իդէոլոգիա, խիստ խորամաննէ յարմարող և դարանակալ: Ճիշտ այնպէս, ինչպէս ամբողջ բուրժուական իդէոլոգիան ներկայումս:

Մի ժամանակ բուրժուական քաղաքատնտեսութիւնը, օրինակ, յայտարառում էր, թէ մասնաւոր սեփականութեան և կոնկուրենցիայի վրա հիմնած տիրող հասարակակարգը մարդկային «բնութեանը» հարազատ և «յաւիտենական» տնտեսական-հասարակական կարգն է: Բայց դուք գտէք այժմ մի հատ խելը գլխին քաղաքանութեան, որ միամտութիւն ունենար այդ տեսակ դաքանութեան, որ միամտութիւն անելու: Ինչհետ Միթէ բուրժուազիան յայտարարութիւն անելու: Ինչհետ Միթէ բուրժուազիան մասցել է առանց հաւատարիմ ու նուիրւած իդէոլոգների: Ոչ, մենք լաւ զիտենք, որ եւրոպական և ուստի համալսարանները լցնող տնտեսագիտութեան պրոկան համալսարանները լցնող տնտեսագիտութեան պրո-

կան կամալսարանները լցնող տնտեսագիտութեան պրո-

«տեսական» բնաւորութիւն ունի: Բայց այստեղից ի՞նչ գործնական եղակացութիւն են անում այդ գիտնականները: Այս որ վայել է իրենց, որպէս բուրժուազիայի վարձկաններին: Որովհետև կապիտալիզմը դեռ գոյութիւն ունի և զուրկ չէ բարեմանութիւններից», ապա ուրեմն հարկաւոր է, նրանց կարծիքով, կուել պատմութեան յեղացրիչ ոյժերի դէմ, հարկաւոր է ամեն կերպ ճնշել բանւոր դասակարգի ձգտումը դէպի նոր հասարակակարգը, զրկել, օրինակ, բանւորներին ընտրողական իրաւունքից, կօպիցիայի իրաւունքից և այլն: Մի խօսքով անել ամեն բան, որպէսզի որքան կարելի է երկարաւոր և—ախ, երանի թէ հնարաւոր էր եղել այդ—յաւիտենական լինի կապիտալիզմի գոյութիւնը: Համաձայնեցէք, որ բուրժուազիան տեղիք չունի գժգոհելու իր գիտնականներից:

Այդ քաղաքանատեսների օրում են հէնց—հակառակ իրենց բարի ցանկութիւններին — սոցիալ-նացիոնալիստները՝ Դ. Ա. Նը, օրինակ, զըում է. «Ազգը գոյացել է պատմութեան ընթացքում: Ուրեմն այն չափով, որ չափով նա պատմական ոյժերի արդիւնք է, ապա և ենթակայ է նոյն պատմական ոյժերի կենդրունաձիգ և կենդրունախոյս զօրութեան»: Շատ գեղեցիկ: Թւում է, թէ երբ մի մարդկան խօսում է պատմական ոյժերի մասին, նա հասկանում է, ոյժեր ասելով, զանազան հասարակական դասակարգը, որոնց փոխադարձ կոիւը պէտք է որոշէ գոյութիւն ունեցող հասարակական-պետական ձերբի, նրանց թւում և ազգութեան, յետագայ զարգացումը, էվոլյուցիան: Այլապէս ինչ է նշանակում «պատմական ոյժեր», եթէ ոչ մի անբովանդակ խօսք:

Բայց եթէ կուող դասակարգերի բռնած զիրքից, նրանց քաղաքականութիւնից է կախւած ազգութեան յետագայ էվոլյուցիան, հարց է ծագում, որն է այն քաղաքականութիւնը, որին պէտք է հետևի ազգերի էվոլյուցիայի խնդրում բանւոր դասակարգը: Եւ տեսէք, եթ ինչ պատասխան է թելադրում այդ հարցին խորա-

մանկ ու դարան մտած նացիոնալիզմը Դ. Ա. նին.  
«Ազգութիւնների բախտը, — զբում է նա, — զեմուրա-  
տիան թողնում է լուծելու ապագային: Նա ինքը չե-  
կամենում բռնանալ ու ջնջել մի բան, որը ինքնին  
արգելք չէ նրա դասակարգային կաւին»: Այս «բռնա-  
սան ու ջնջելը» յիշում է մրայն ընթերցողին մի փոքր  
համար, նա պէտք է կարծի, որ Դ. Ա. նի շփոթեցնելու համար, նա պէտք է կարծի, որ Դ. Ա. նի  
շփոթեցնելու համար, նա պէտք է կարծի, որ Դ. Ա. նի  
ջելուն: Բայց այդ ի միջի այլոց: Դ. Ա. նի վլիաւոր  
միտքն այն է, որ «ազգութիւնների բախտը դեմո-  
կրատիան թողնում է ապագային...»:

Այ քեզ բան: Պարզ է, որ Դ. Ա. նը, — ինչպէս մի  
անգամ արդէն նկատեցինք վերաբ, — գործ է ածում  
«պատմական ոյժեր», «կենդրուածիկ ու կենդրուախոյս  
գորութիւն» բառերը բայց չի հասկանում այդ բառե-  
րի նշանակութիւնը: Դ. Ա. նին թում է, որ կայ ինչ  
որ «ապագայ», կան ինչ որ «կենդրուածիկ ու կեն-  
դրուախոյս» ոյժեր, որոնք պէտք է որոշեն՝ ազգութիւն-  
ուների «բախտը», իսկ բանւոր դասակարգը այսեղ՝ ո-  
նակ, նա ոչ մի դեր չունի կատարելու, նա չէզոք է  
ու ձեռնպահ այդ գործում:

Պարզ է, որ այդ մի անհեթեթութիւն է:

Բայց, ևթէ մենք ուշաղեր հետեւնք Դ. Ա. նի  
մտքերի ընթացքին, մենք կը տեսնենք, որ շատ խոր  
իմաստ կայ այդ անհեթեթութեան» մէջ: Դ. Ա. նին  
հարկաւոր էր չէզոքացնել ազգերի էվոլյուցիայի խընդ-  
րում բանւոր դասակարգը, որպէս զի ասպարէզում  
միայն բուրժուազիան իր ազգային քաղաքակա-  
նութեամբ, և որպէս զի ինքը այդ քաղաքականութիւ-  
նը յանձնարէ մեզ այսօր, որպէս միակ խելացի աղ-  
քային քաղաքականութիւն: Այդ «անհեթեթութիւնը»  
մի կամուրջ է, որի վրայով Դ. Ա. նը իր ուզիկ թեզե-  
մից (ազգութիւնների պատմական բնաւորութեան մա-  
սին) անցնում է միանգամայն սխալ և, որուատրիա-  
տի տեսակէտից, մնասակար ու ըէակցիոն քարոզին՝  
ազգային բաժանումների ու սահմանազծումների» և  
ազգային կուլտուրական աւտոնոմիայի մասին:

Մեր վերև բերած օրինակից՝ բուրժուական տըն-  
տեսագէտների մասին՝ մենք տեսանք, որ կարևոր այն  
չէ, թէ նրանք խօսրով կապիտալիզմը կը յայտարա-

լեն յաւիտենակա՞ն, թէ պատուական կաթեպրիա: Ճիշտ նոյնպէս, մենք տեսնում ենք, որ կարևորը այն-  
չէ, թէ ազգութիւնը Դ. Ա. նը յայտարարում է յաւի-  
տեսական մի երևոյթ, թէ պատմական ոյժերի արդիւնքը:  
Կարևորը և վճռական նշանակութիւն ունեցողը այն է,  
թէ ինչ զիրք ենք բանում կենանքում մենք ինքներս—  
կենանի մարդիկ, կենդանի դասակարգերը: Արդեօք  
մեր իրական ծրագրով ու գործելակերպով ամրացնեմ  
ենք կապիտալիզմի հիմքերը, թէ գերեզման ենք փո-  
րում նրա համար, կամ, ներկայ դէպքում, ծառայում  
ենք նացիոնալիզմին, թէ ինտերնացիոնալիզմին:  
Քաւական է հէնց միայն դնել այս՝ հարցը, որ-  
պէսզի հասկանալի լինի, որ մեր «մարքսիստ» Դ. Ա. նը,  
չընայած իր բարի ցանկութիւններին, ծառայում է  
միանգամայն բուրժուական նացիոնալիզմին՝ ընդդէմ  
պրոլետարական ինտերնացիոնալիզմի:

Մեր սոցիալ-նացիոնալիստները պահանջում են  
ազգերի համար աւտոնոմիա միայն կւլտուրական  
ինպիներում, ինչպէս խօսրով սովորաբար հաւատաց-  
նում են նրանք: Մենք տեսանք արդէն, որ կուլտուրա-  
կան խօսքը այստեղ միայն մի պատրւակ է, մի շիր-  
մա: Նրանք ձգտում են, մեկնելով իրենց տեսական  
նացիոնալիստական հայեացըներից, որքան կարելի է  
աւելի ընդլայնել ազգային միութիւնների իրաւուց-  
թիւնը:

Բայց ինչու են նրանք այդքան սիրել կուլտուրա  
խօսքը: Որովհետեւ, — պատասխանում են նրանք, — ամեն  
կուլտուրա ազգային է: Նա իր սկիզբը առնում է ազ-  
գային առանձնայատկութիւններից\*:

Աւտորիացի օպպորտիւնիստի այս հանճարեղ միտ-  
քը կրկնել էր վերջերս մի վրացի «յայտնի մարքսիստ»  
(որի ասպարէզ գալը, ամենք ի գէպ, այնքան վճռա-

\* ) Պերնեսուորքեր. «Ազգային հարցը և ու. գ.» հայելէն  
թարգմ. եր. 12:

կան նշանակութիւն ունեցաւ Դ. Ա.նի համար և այնպէս յանկարծ բացեց նրա հոգու և լեզվի վրայ մինչեւ այդ եղած փականքները): Այժմ այդ միտքը ոգևորում է Դ. Ա.նին: Դպրոցական գործում, գրականութեան մէջ, առհասարաւ կուլտուրական բնադրաւառում իշխում է ազգային լեզուն: Հետևապէս պարզ է, —մտածում են Դ. Ա.նները, —որ կուլտուրան միշտ ազգային է:

Որքան ծանծաղամիտ պէտք է լինել կամ, լաւագոյն գէպքում, որքան կուրացած պէտք է լինել նաև ցիոնալիստական ֆրազայից՝ այս տեսակ հանճարեղ անհեթեթութիւններ ասելու համար: Եւ այդ մարդիկ հաւատացած են, որ իրենց բերանով խօսում է ինքը մարքսիզմը: Այն տարրական ճշմարտութիւնը, որ կուրտուրան որոշում է իր դասակարգային բովանդակութեամբ և ոչ ազգային արտաքինով, միանգամայն անհասկանալի է մնացել մեր «մարքսիստների» համար: «Ֆէոդալական կուլտուրա», «բուրժուական կուլտուրա», «պրոլետարական կուլտուրա» — այդ բոլորը դատարկ հայրեններ են նրանց համար: Նրանք ճանաչում են միայն «ազգային կուլտուրա», որը այն էլ... «սկիզբն է առնում ազգային սուանձնայատկութիւններից (!)...»:

Նման գոհարների թվին է պատկանում Դ. Ա.նի նաև այն արտայայտութիւնը, որ մենք մէջ բերինք յօդածի սկզբում: «Ազգութեան պատկանելու գիտակցւած անհատականութիւնն է»: Որքան անհեթեթութիւն կայ այս խօսքերի մէջ: Մինչև այժմ մենք կարծում էինք այս պատկանելու գիտակցւած անհատական բանութիւնը մի բանւոր, օրինակ, այն էինք, որ՝ ըստ մարքսիզմի՝ մի բանւոր, ազգաւումանակ է դառնում «գիտակից անհատ», երբ ազաւում է ազգասիրական քարոզների ազգեցութիւնից, երբ հասկանում է, որ ինքը «պատկանում» է պրոլետարիատ կոչւող դասակարգին և սկսում է ապրել այդ դասակարգի իդէալներով: Դուրս է գալիս, որ բանւորի համար «գիտակցւած անհատականութիւնը» ոչ լորի ինչ է, եթէ ոչ «ազգութեան պատկանելը» (այս այլ ինչ է, եթէ ոչ «ազգութեան պատկանելը» (այսիքն, երևի, ազգութեան պատկանելու գիտակցութիւնը, կամ ազգային ինքնապիտակցութիւնը):

Վայ այս հայ բանւորին, որին «գիտակից անհատ» գարձնողը, մարքսիզմի դասեր տւողը պէտք է լինեն Դ. Ա.նները:

Բայց շարունակենք: Ազգային կուլտուրական աւտոնոմիայի կոնկրետ պահանջների թւում յիշում է միշտ ամենից առաջ կրթական գործում գործի ազգայնացումը: Ուրիշ, աւելի գուցէ կարենը «ազգային գործերը», որոնցով պէտք է զբաղեն ազգային միութիւնները, նացիոնալ-սոցիալիստները չեն յիշատակում, —մասմբ, որովհետեւ իրենք էլ պարզ չեն պատկերացնում այդ իրենց, մասմբ էլ, որովհետեւ վախենում են շատ ակներև դաշնել իրենց նացիոնալիզմը:

Իսկ գպրոցակմն գործը... չե՞ որ հետեղական մարքսիստներն էլ ընդունում են, որ գպրոցներում անհրաժեշտ է մայրենի լեզուն: Սոցիալ-նացիոնալիստներին երբեմն թւում է նոյն իսկ, որ իրենք մի նոր բան չեն պահանջում մեղանից, որ նրանք միայն աւելի հետեղական են, քան մենք: «Զարմանալի բան է, —բացականչում է Դ. Ա.նը մեր հասցէին, —նրանք, ենիկով դեմոկրատիզմի սկզբունքներից, պատրաստ են ժողովրդական մասսային տալ մայրենի դպրոց և այլն, բայց դժւարանում են քէտ տալ դպրոցական գործի կենդրուացման, թէկ գիտեն, որ կենդրուացումը կապիտալիստական հասարակարգի բնորոշ առանձնայատկութիւնն է»: Վերջին խօսքերը, թէ «կենդրուացումը...» և այլն, յիշում են, ի հարկէ, հի քայլու, հի արկէ, հի կէ սելու, հի կէ գործութիւն են թողնում: Բայց Դ. Ա.նը կարծում է, յամենայն գէպս, որ բոնում է մեզ անհետեղականութեան մէջ: Մենք իրը թէ միևնույն բանն ենք ուզում, միայն Դ. Ա.նը աւելի հետեղական է, իսկ մենք վախենում ենք, «թէկ գիտենք» և այլն: Այն բոլորից յետոյ, ինչ որ մենք ասել ենք մինչեւ այժմ, ընթերցողի համար պարզ պէտք է լինի, որ Դ. Ա.նը չարաչար սխալում է: Մենք խօսում ենք տարբեր լեզուներով: Մենք էլ «կենդրուացում» ընդունում ենք, պ. Ա.նուն, բայց մեր «կենդրուացում» ուրիշ տեղ է, ձերը՝ ուրիշ: Ցարմարեցնելով այս տեղ Սայեաթ-Նովայի խօսքերը, մենք կասէինք Դ. Ա.նին. Իմ ասածն ուրիշ տեղ է, ուրիշ արդ,

Քու ուզածն ուրիշ գիղ է, ուրիշ դիղ...»

Մենք պահանջում ենք, որ գպրոցական գործում աիրի լեզուների կատարեալ տպատութիւն, որ կրթութիւնը, մանաւանդ սկզբնական կրթութիւնը արւի

մայրենի լեզով, այսինքն այն լեզով, որով խօսում  
են երեխաները իրենց ընտանիքներում, այն լեզով,  
որով նրանք աւելի ձիշու և աւելի ջրւառ կարող են սո-  
վորել: Բայց այդ բաւական չէ: Մենք հոգում ենք ոչ  
միայն այն մասին, թէ ինչ լեզով են սովորեցնում ե-  
րեխաներին, այլ և այն մասին, թէ ինչ են սովորեց-  
նում, ինչ ոգով, ինչ ուղղութեամբ են դասախարա-  
կում մեր զաւակներին: Սոցիալէնացիոնալիստները  
ի նկատի ունեն միայն ծեփ, մենք ի նկատի ունենք  
նաև բովանդակութիւնը: Եւ այդ գեր բոլորը չեն. Ալ-  
բանը այդ ձեւի համար զրհում են բովանդակութիւնը:  
Այս թէ ինչու մենք այսքան հակառակ ենք նրանց:  
Երբ Դ. Անը խօսում է այժմեան գպրոցական գործե-  
մասին, նրան սարսափեցնում է միայն այն, որ այն  
մասին, նրան սարսափեցնում է միայն այն, որ այն  
տեղ յաճախ տիրում է օտար լեզուն: Եւ տեսէք, թէ  
ինչ մասյ ներկեր է գործ ածում Դ. Անը և Օտարա-  
կան գործ ածում է նաև, չի կարող մնալ առ-  
լեզու գպրոցը, պատմում է նաև, ոչի կարող մնալ առ-  
լեզու հետեւանքների. նա գրական դիտութիւն և գի-  
տակցութիւն չի տալ, բայց գրամ վախարէն կը թվա-  
սէ իր սանի հոգին և հաշմանդամ կը գտարձնէ նրա-  
ուղիղը»:

Որպիսի սարսափէ Բայց դեռ լսեցէք Դ. Անին,  
ութէ մի որեւէ կառավարական սիստեմի անհրաժեշտ  
են մտաւոր անդամալոյներ, գիմազուրկ և անգոյն  
հպատակներ, ստրուկների մի բազմութիւն, որի վրայ  
ալիստի լինի իր փարձերը կատարելու, առաջ նա  
պիտի զարկ տայ նման գպրացների ծաւալման...»:

Յայտնի է, որ կովկասեան հայ ինտելիգենցիան  
իր ահազին մեծամասնութեամբ սիզորել է պետական  
«օտար սլեզու» գպրոցներում, վերցրէք «Մշակի» զի-  
կավարներին՝ սկսած Արծունուց մինչև Քալանթարը  
և միւսները, վերցրէք «Եաշնակցականներին», յանձնն  
Զաւարեանների, Քրիստոնիոր Միքայէլեանների և  
այլն, վերցրէք մեր նորածիւ մարքսիստական ին-  
տելիգենցիան, զուք կը տեսնէք, որ դրանց մեծ մա-  
տելիքնեցիան, զուք կը տեսնէք, որ դրանց մեծ մա-

Մեզ թւում է, որ կարելի է այստեղ ասել. «Նե-  
տակ սրաшեն չերտե, քայլում ասել թէ

Մենք չենք ուզում, ի հարկէ, գրանով ասել թէ  
Դ. Անը միանգամայն անսարդար է, թէ մեր «օտարա-  
լեզու» գպրոցները կանգնած են ցանկալի բարձրու-  
թեան վրայ: Բայց լիցի: Ընդհակառակը, նրանք այնքան  
վատ են, որ աւելի վատ կարծես չէին արող լինել:  
Բայց երբ մենք յիշում ենք այն բոլոր գառնութիւն-  
ները, որ զգացել է իւրաքանչիւրը մեզանից, ով ան-  
ցիլ է այդ գպրոցների բոլից, —մեղ սարսափեցնում է  
ամենից առաջ ոչ թէ օտար լեզուն, այլ այն ոգին,  
այն ուղղութիւնը, այն ծրագիրը, որ տիրում է այդ  
գպրոցներում: Օտար լեզու ազդեցութիւնը զգացնում  
է միայն սկզբնական ցրջանում, բայց թէ նոյն այդ  
սկզբնական ցրջանում և թէ յետոյ մինչեւ վերջը՝ ամեն  
նից վնասակարը, խեղոսղը, ստրկացնողը՝ այդ գպրոց-  
ներում իշխող Պորեկոնոսոցների և Իլովայսիների ո-  
գին է. այն ոգին, որ այնքան անհրաժեշտ է եղել իշ-  
խող գասակարգի համար: Այստեղ էլ՝ լրթական գոր-  
ծում, այդ «կուլտուրական ընսպաւում»՝ աւելի կա-  
րևոր գասակարգային միջուկն է և ոչ ազգային կե-  
ղեւը, էութիւնը՝ և ոչ ձեւը: Որքան էլ կարեոր լինի  
լեզու ինդիրը, նա, յամենայն դէպս, մի մասն է միայն,  
և համեմատաբար երկրորդական մասը գպրոցների  
վրայ ծանրացած ընդհանուր գասակարգային քաղա-  
քականութեան:

Մեր հայկական հոգևոր գպրոցներում տիրում է  
հայերէն լեզուն: «Օտար լեզուն» ոչ միայն չի ճնշել  
նրանց, այլ միանգամայն արհամարհւած է եղել այդ  
գպրոցներում: Բայց միթէ Դ. Անը կարծում է, որ  
նրանք պակաս են «թվաատել» իրենց սաների հոգինե-  
րը և «հաշմանդամ» գարձրել նրանց ուղեղները: Այդ  
գպրոցներում իշխող կերպական, ազգային՝ տիրացու-  
ական ոգին ոչ պակաս զղելի է, քան «օտարալեզու»  
գպրոցներում իշխող Պուրիշկիների ոգին:

Այս բոլորը պարզապէս ցոյց է տալիս, որ խնդի-  
րը միայն այն չէ, թէ գպրոցը ազգային է, թէ օտա-  
րալեզու, այլ և այն, և ամենից առաջ այն, թէ նա իր  
ծրագրով, իր ներքին բովանդակութեամբ ժողովրդա-

կամ գործակալն զպրոց է; թէ գործիք շահաւ գործող դասակարգերի ձեռքին:

Այս, իսկիրք հէսց այդ բովանդակութիւնն մէջ է,  
Անուն: Եւ այստեղ հարց է ծագում. Երբ և ի՞նչ  
պայմաններում կարող է բանւորական դեմոկրատիան  
իր ուղած բովանդակութիւնը մտցնել դպրոցական-  
կրթական գործում. Երբ կարող ենք, օրինակ, մենք,  
հայերս, բանւորական դեմոկրատիայի տեսակէտից  
գանկալի դպրոցներ ունենալ:

Պ. Ա-Նը պատասխանում է. — այն ժամանակ, երբ  
կըթական գործը կառնւի ընդհանուր պետական մար-  
մինների ձեռքից և կը յանձնաւի ազգային միութիւն-  
ներին. երբ հայ բանւորը, ձեռք ձեռքի տւած հայ  
բուրժուայի ու հայ տէրտէրի հետ, կը պաշտպանեն  
հայ գլուխը, հայ լեզուն օտար ազգերի ոտնձգութիւն-  
ների դէմ:

Մենք պատասխանում ենք. — այն ժամանակ, երբ  
Ռուսաստանում լիովին կը յաղթանակէ գեմոկրատիան,  
երբ հայ բանուրը ձեռք ձեռքի տւած ուու, վրացի,  
լեհ, հրէայ և այլ բանուրների հետ, յենուելով ամբողջ  
դեմոկրատիայի վրայ՝ թէ ընդհանուր պետական պար-  
ամենատում և թէ շրջանային ու տեղական ինքնավա-  
րութիւնների մէջ՝ կը հակազդեն իրենց դասակարգա-  
յին պահանջները և իրենց միացեալ դասակարգային  
ոյժը իշխող դասակարգերի ուսնձգութիւնների վէմ և  
կը կուեն՝ յանուն լաւագոյն դպրոցի՝ ժողովրդական  
մասսաների համար:

պահանջները, —առարկում են սոցիալ-նացիոնալիստները: Այս, մենք ընդունում ենք, —ասում է Դ. Ա. Նը, —դասակարգային կրիւ «Քաղաքական և տնտեսական հարցերի մէջ», բայց կուլտուրան չէ որ միշտ ազգային է: Զէ որ հայ լեզուն ընդհանուր բարեմասնութիւն» է թէ հայ բանւորի և թէ հայ բուրժուայի ու տ' րտէրի համար: Զէ որ մենք ցանկանում և խոստանում ենք լեզուն, կուլտուրան, առհասարակ ազգային հարցը «դուրս բերել հասարակական դասակարգերի կովի շրջանառութիւնից»:

Այս, ի դժբախտութիւն ձեր, գուք այդ ցանկա  
նում էք պ. Աշնուն: Եւ հէնց այդտեղ է, որ ցոյց էք  
տալիս ձեր՝ մարքսիզմի աղօտ ըմբռնումը և ձեր ման-  
կական հասկացողութիւնը դասակարգային կուի  
մասին:

Կրթական գործը ընդհանրապէս և լեզւի խնդիրը  
մասնաւորապէս կարևոր զէնքերից մէկն է կուող դա-  
սակարգերի ձեռքին, և ոչ մի դասակարգ այնքան  
տիմար չի գտնվի, որ կամովին տայ իր ձեռքից այդ  
զէնքը: Ուուս բուրժուազիան կարող է ճնշել հայ լե-  
զուն՝ դրդւած իր դասակարգային շահերից. հայ բուր-  
ժուան կարող է, նոյն իր դասակարգային բնագիներից  
դրդւած, արհամարհել հայ լեզուն, բայց ուուս և հայ  
բանւորը միասին, իրենց եղբայրական միութեան մէջ,  
չեն թոյլ տայ, որ ճնշել հայ լեզուն, եթէ այդ լեզուվ  
դասակարգային դաստիարակութիւն է ստանում հայ  
բանւորը, եթէ այդ լեզուվ պէտք է կրթւի հայ բան-  
ւորի և հայ գիւղացու զաւակը: Նոյնը պէտք է ասել,  
ի հարկէ, և վրացական, թուրքական, լիհական և այլ  
լեզուների մասին: Ահա թէ ինչու լեզւի ազատութեան  
խնդիրը, կրթական գործի այս կամ այն բովանդակու-  
թեան խնդիրը—ընդհանուր դասակարգային խնդիր է:  
Եւ ահա թէ ինչու Ռուսաստանում ապրող բոլոր ազ-  
գերի բանւորները ցանկանում են միասին պաշտպա-  
նել իրենց պահանջները նաև կրթական գործում, և  
չեն ցանկանում առանձնանալ և սահմանագծել նաև  
«կուտուրական բնագաւառում»: Դ: Ա.Նը չգիտէ այդ  
մինչեւ այժմ: Նրան յայտնի է և նրա համար հասկա-  
նալի է միայն այն որ հայ տիրացուները ցանկանում  
են «ազգուին» վարել իրենց կուտուրական (և ընդ-

հանրապէս հասարակական) գործերը: Բայց որ բան-  
տրներին հարկաւոր է դաստիարագովին և ոչ ազգու-  
վին վարել այդ բոլոր գործերը, այդ Դ. Ա.նը դեռ  
չի հասկանում և... ուստի կայ, որ երբէք չի հասկա-  
նայ, —ան աստիճան նա գերի է նացիոնալիզմին:

VI

Մենք ասում ենք, որ դպրոցական գործը պէտք  
է գտնել պետական պարլամենտի և տեղական ինքնա-  
վարութիւնների ձեռքին: Որպէս լաւ նացիոնալիստ՝  
Դ. Ա.նը ամենից առաջ հարց է տալիս մեզ. ի՞նչ կա-  
նէք դուք, եթէ հայերը փոքրամասնութիւն կազմելով  
այդ ընդհանուր և տեղական հաստատութիւնների մէջ,  
չը կարողանան պաշտպանել հայ լեզուն, և նա հալած-  
է մեծամասնութիւն կազմող ուսւազգի կողմից:

Դ. Ա.նը ոչ մի տեղ իր յօւլածում հարց չի դը-  
նում, թէ ի՞նչ կը լինէր, օրինակ, այն դէպքում, եթէ  
յաջողւէր նրա ազգային-կուլտուրական աւտոնոմիան  
և հայ ըանուրութիւնը, փոքրամասնութիւն լինելով ազ-  
գային մարմիններում, չը կարողանար իր ուզած բո-  
վանդակութիւնը մտցնել ազգային գործերում: Ի՞նչու-  
շի դնում նա այդ հարցը: Որովհետեւ Դ. Ա.նը որքան  
լաւ նացիոնալիստ է, նոյնքան վաստ մարքսիստ է:

Եւ Դ. Ա.նը, հետեւելով իր հրէայ և աւստրիացի  
ուսուցիչներին, գարանտիստ է պահանջում մեղանից  
փոքր ազգերի և ազգային փոքրամասնութիւնների հա-  
մար: Նրա կարծիքով, որպէսզի լեզուն չը ճնշւի և  
ազգային կուլտուրը վերանայն՝ անհրաժեշտ է «սահմա-  
նագիծեր» ազգերը և ստեղծել «պետական գործառնու-  
թիւն կատարող» ազգային մարմիններ: «Ազգային-  
թիւն կատարող» ազգային մարմիններ:

Ազգութեան հիմնական յատկանիշը լեզուն է: Լե-  
զուների իրաւահաւասարութեան գարանտիա ստեղծելը

դա նշանակում է,—Դ. Ա.նի կարծիքով,—լուծել ազ-  
գային հարցը: Երբ լեզւի գործը, ուրիշ խօսքով՝ կրթա-  
կան-կուլտուրական գործը յանձնուում է իրենց, ազգե-  
րին, պարզ է,—մտածում է Դ. Ա.նը,—կարելի է վստահ  
լինել, որ լեզուները չեն ճնշւի այլևս, հետեւապէս ազ-  
գային հարցը «դուրս կը կըայ դասակարգային կուկի  
շրջանառութիւնից» և ազգային բաղկումները կը վե-  
րանան:

Որպիսի սխալ ու միամիտ մտածողութիւն: Նախ և  
առաջ հիմովին սխալ է, թէ ազգային հարցը միայն լե-  
զուների իրաւահաւասարութեան հարց է, եթէ Դ. Ա.նը  
մի փոքր կանգ առնէր գոնէ Մերեմից բերած իր մի  
քաղածքի վրայ, նա կը հասկանար, որ ազգային կոի-  
ւը դասակարգային կուկի արտայայտութիւններից մէկն  
է, որ նա տնտեսական և քաղաքական բնոյթ ունի  
թէ իր ծագումով և թէ իր նպատակներով: Վերցրէք,  
օրինակ, Ռուսաստանի հրէաներին. մը թէ նրանց ազ-  
գային հալածանքները վերաբերում են միայն լեզուն:   
Միթէ այն, որ նրանց փակել են չերտաց օչնձուու  
կոչւող բանտի մէջ, որ նրանց արգելում են զբաղել այս  
կամ այն արհեստով և ձեռք բերել հողային սեփակա-  
նութիւն, որ նրանց զրկում են զանազան քաղաքական  
և քաղաքացիական իրաւունքներից, —մը թէ այդ բոլորը  
լեզուների իրաւահաւասարութեան խնդիր է, և աւելի  
ոչինչ: Եթէ հաւատանք Դ. Ա.նին, մենք պէտք է հա-  
մարենք, որ այդ բոլորը ուղղաւած է հրէական «Փար-  
զոնի» դէմ և նպատակ ունի միայն՝ օտարալեզու դրպ-  
րոցների: միջոցով «թլփատել» հրէաների հոգիները:  
Բայց մենք տհմում ենք, ընդհակառակը, —հրէաներին  
թոյլ է արւում ունենալ իրենց ազգային դպրոցները,  
իրենց ազգային գրականութիւնը (ինչպէս և հայերին),  
իսկ «օտարալեզու» դպրոցներից նոյն իսկ բշում են  
հրէաներին, տոկոսային նորմաներով և այլ միջոցներով  
փակում են հրէաների առաջ այդ դպրոցների գոները:

Զէ՞ որ սրանք հանրածանօթ փաստեր են: Ի՞նչով  
բացատրել, որ այդ հանրածանօթ ու ակնյայտնի փաս-  
տերը վրիպում են Դ. Ա.նի ուշադրութիւնից:

Բայց եթէ ազգային հալածանքները և բաղկում-  
ները այդքան խոր արմատներ ունեն և այդքան բարդ  
ու բազմակողմանի արտայայտութիւններ, ի՞նչ զարան-

տիւս է տալիս մեզ իր կողմից Դ. Ա.նը, որ եթէ իրագործւի իսկ նրա հայկական լան ազգային-կուլտուրական աւտոնոմիան, դրա հետեւել օրը ռուս ազդը հրէաների օրը չի գցելու հայերին: Զէ որ ազգերի տնտեսական և քաղաքական ճնշումները Դ. Ա.նը դեռ ևս չի «գուրս բերել դասակարգերի կուի շրջանառութիւնից»...: Նոյն հէնց իր՝ ազգային-կուլտուրական աւտոնոմիայի գոյութեան և յարատեսութեան համար ունի արդեօք Դ. Ա.նը որև է գարանտիա:

Երեակայեցէք, որ իրականացել է մեր սոցիալ-նացիոնալիստների իդէալը. ամեն մի ազգութիւն գոյացը է իր համար մի ազգային ճահիճ, և բոլոր ազգերի տիրացուները՝ գոյն ու երջանիկ՝ պարարտանում են այդ ճահիճների մէջ: Հայ լեզուն էլ, այդ «զարմանալի և հրաշալի գործիքը» ազատ զարգարում է: Բայց յանկարծ՝ ահազին մեծամասնութիւն կազմող և հետեւապէս, իրեւ ազգութիւն, մեծ ոյժներկայացնող ոռուսները վճռում են ոյժով զրկել հայերին իրենց ազգային կուլտուրական աւտոնոմիայից և նորից «թլփատել» նրանց հոգիները օտարալեզու դպրոցներում: Ի՞նչ գարանտիա ունի Դ. Ա.նը այդ տեսակ մի աֆրոնտի դէմ:

Մեր կարծիքով նա երկու տեսակ գարանտիա կարող է երեակայել: Նախ՝ որ հայոց ազգը, որպէս մի մարդ—իր բուրժուաներով ու տէրտէրներով—ուտքի կը կանգնի պաշտպանելու իր իրաւունքները ոռւս աղդի դէմ:

Բայց որքան թոյլ գարանտիա է այդ: Համաձայնեցէք, որ եթէ դուք կանգնեցնում էք ազգը ազգի դէմ, երկու միլիոնը շատ փոքրիկ թիւ է հարիւր միլիոնի դէմ:

Երկրորդ գարանտիան, որ կարող է առաջարել Դ. Ա.նը, դա կը լինի մեր կարծիքով երկրի սահմանադրութիւնը: Զէ որ առաջուց որոշած է, որ ազգերը «սահմանագծում են» և որ «անխախտ պիտի մնայ... և այլն»: Այս, եթէ այն թղթի կառը, որի վրայ գըրւած է սահմանադրութիւնը, յանկարծ ստանար այն մոգական զօրութիւնը, որ կարողանար դիմադրել կենազանի քաղաքական ոյժերի գրոհին... այն ժամանակ Դ. Ա.նը կարող էր հանգիստ լինել իր աւտոնոմիայի համար: Բայց այդ հրաշքը հազիւթիւններին, —ոչ:

հետեւ, ասում են... հրաշքների դարը անցել է: Թղթի կտորը կը մնայ թղթի կտոր:

Բայց Դ. Ա.նը կը պատասխանի գուցէ. չէ՞ որ այդ սահմանադրութիւնը յետելից էլ կանգնած են կենդանի քաղաքական ոյժեր, —այն դասակարգերը, որոնք ստեղծել են այդ սահմանադրութիւնը և որոնք թոյլ չեն տայ ոռւս ազգի իշխող դասակարգերին խախտել այդ սահմանադրութիւնը: Բոլոր ազգերին պատկանող բանւորական և գիւղացիական դեմոկրատիան, որը իր կուով նւաճել է նոր սահմանադրութիւնը, կուով կը դիմադրի իր թշնամիների ոտնձգութիւններին:

Այս, այդ ճիշտ է: Բայց աստեղ մենք երկու բան ունենք ասելու Դ. Ա.նին: Նախ՝ որ արգիսով ազգային կուլտուրայի հարցը նորից մտնում է... «զասակարգային կուի շրջանառութեան մէջ»: Եւ երկրորդ՝ այդ զասակարգային կուի գարանտիան արդէն մեր գարանտիան է և ոչ Դ. Ա.նի:

Այս, դա այն գարանտիան է, որ պահանջում էր մեզանից Դ. Ա.նը:

Ո՞րտեղ է կենդրոնացած ու կազմակերպւած լինելու համառուսական բանւորական ու գիւղացիական դեմոկրատիան որը պէտք է իր ամենօրեայ յամառ ու անդուլ կուով պահանովէ ժողովրդական իրաւունքները ապագայ ազատ Ռուսաստանում: Ի հարկէ, պետական պարլամենտում և տեղական ու շրջանային ինքնավարութիւնների մէջ: Նրանց մէջ և նրանց շուրջը: Բայց եթէ այդ համառուսական զասակարգային ո ժերն են, որ պէտք է նախ՝ ստեղծեն ազատ Ռուսաստանը և ապա՝ նրա արթուն պահապանը լինեն. եթէ նրանք են, որ պէտք է պաշտպանեն լեզւի և կրթութեան ազատութեան համար ստեղծւելիք ազգային-կուլտուրական աւտոնոմիան. որ պէտք է կուեն ամեն տեսակ ազգային ճնշումների և բռնութեան դէմ—ապա ուրեմն ի՞նչ կարիք կայ առնելու նրանց ձեռքից կրթական կուլտուրական գործերը և յանձնելու այդ առանձին «ազգային միութիւններին»: Ի՞նչպէս է, որ այդ զասակարգային ոյժերի ստեղծած և այդ ոյժերի պաշտպանութեանը միայն ապաւինած «ազգային միութիւններին» կարելի է վստահել կրթական կուլտուրական գործերը, իսկ իրենց, այդ ոյժերին, —ոչ:

ի՞նչ տրամաբանութիւն է սա: — Կոյր նացիոնա  
վասի տրամաբանութիւն:

Բայց այդ տրամաբանութիւնը պարտադիր է մի-  
այն Դ. Ա.նի և նրա նմանների համար: Նրանք կարող  
են չը վստահել համառուսական դեմոկրատիային և ա-  
մենից առաջ՝ քաղաքական կուռում ազգային խարու-  
թիւն չը ճանաչող բանւորական դեմոկրատիային, բայց  
այդ դեմոկրատիան, պարզ է, չի կարող չը վստահել  
ինքն իրեն:

Բանւորական դեմոկրատիան կարիք չունի յանձ-  
նելու ազգային միութիւններին դպրոցական ուլտու-  
րական գործերը: Լեզուի և դպրոցական գործի ազատու-  
թիւնը նոյնպիսի դասակարգային պահանջ է, ինչպէս  
և միւս նրա պահանջները: Եւ այդ պահանջը նա կը  
պաշտպանի այնտեղ, որտեղ նա մզում է իր դասա-  
կարգային կուռը առնասարակ—պետական պարլամեն-  
տում, տեղական և շրջանային ինքնավարութիւնների  
մէջ: Կենդրուսացնելով դպրոցական գործն էլ այդ հիմ-  
նարիութիւնների մէջ, նա կաշխատի ոչ միա ն պաշտ-  
պաննել լեզուի ազատութիւնը, այլ և կը ձգտի ստեղծել  
այնպիսի դպրոցներ, որոնք իրենց ծրագրով, իրենց  
ուղղութեամբ համապատասխանէին ժողովրդի առաջա-  
դիմութեան և պրոլետարիատի ազատազրութեան գոր-  
ծի շահերին: Հայ, վրացի, ոռու և այլ բանւորները  
ձեռք ձեռքի տւած ա, ու միջազգային-տերրիտորիական  
և ոչ ազգային-արինակցական «աստատութիւնների  
մէջ առաջ կը տանեն և՝ այդ կարևոր՝ կրթական-կուռ-  
տուրական գործը, հոգալով ոչ միայն այդ կուլտուրայի  
ձեի, այլ և նրա դասակարգային բովանդակութեան  
մասին:

## VII

Մինչև այժմ մենք աշխատում էինք ապացուցել  
որ ազգային-կուլտուրական աւտոնոմիան ոչ մի գրա-  
կան բան չի ներկայացնում իրենից, որ նա միանգա-  
մայն աւելորդ է: Բայց այդ դեռ բաւական չէ: Նա  
բացի այդ և շատ վնասակար է: Նա վնասակար է, ի

միջի այլոց, նրանով, որ բարժուական-նացիոնալիս-  
տական, ազգային-տիրացուական ոգի կը մտցնի  
կրթական գործի մէջ: Լեզուի և կրթութեան ազատու-  
թիւնը կը ծառայի ազգային «տեղական և կենտրոնա-  
կան հաստատութիւնների» ձեռքին ոչ յօգուտ ազգերի  
մերձեցման, յօգուտ միջազգային եղբայրութեան, այլ  
ընդհակառակը, յօգուտ ազգերի կղզիացման, մեկու-  
սացման, օտարացման: Բայց այդ դեռ բոլորը չէ: Մենք  
մի երկու անգամ յիշեցինք արդէն, որ նացիոնալ-օպ-  
ցիալիստները ցանկանում են բաժանել ըստ ազգու-  
թիւնների ոչ միայն կրթական-կուլտուրական գործե-  
րը, այլ նրանց իդէալն է ստեղծել այնպիսի պետա-  
կան ձևեր, որ իւրաքանչիւր ազգութիւն կարողանայ-  
ըստ կարելոյն իր բոլոր հասարակական գործերը տնօ-  
րինել «ազգովին»: Նրանց փափագն է, որքան կարելի  
է, ընդլայնել ազգային ներկայացուցչական մարմին-  
ների իրաւասութիւնը: Այդ չի թագցնում ինքը Դ.  
Ա.նը, ինչպէս տեսանք վերև բերած նրա «դիտողու-  
թիւններից և դատողութիւններից»: Այդ աւելի ևս  
պարզում է, երբ նա ասում է, որ մենք, հայերս, ու-  
նենք ներկայում ազգային կուլտուրական աւտոնոմիա  
— միուսաստանում՝ 1836 թւականի «Պոլոյշեն»-ն,  
իսկ Տաճկաստանում՝ Ազգային Սահմանադրութիւնը:  
«Բայց նրանք (հայերը), — ասում է Դ. Ա.նը, — չպիտի  
բաւականանան եղածով եղածը գտնում է սաղմային  
գրութեան մէջ»:

Որ նոյնիսկ իրենց «ապամային» գրութեան մէջ  
մեր ազգային մարմինները չեն բաւականանում միայն  
կուլտուրական գործերով, այլ ձգտում են խառնել և  
քաղաքական հարցերի մէջ, այդ լաւ յայտնի է մեր  
բոլորիս: Ոչ միայն Պոլսի Ազգային Ժողովը, այլև մեր  
Էջմիածինը միշտ երևակայում են իրենց հայ ազգի  
հաւաքական կամքի արտայայտիչներ և հանդէս են  
գալիս իրենց քաղաքական գեկլարացիաներով թէ  
իրենց բնական պետութիւնների և թէ ամբողջ աշ-  
խարհի առաջ: Դրա մի պերճախօս, բայց ոչ եղակի  
օրինակը մենք տեսանք վերջին տարիներում — Բալկան-  
եան Պատերազմին յաջորդած դէպքերի ժամանակ,  
երբ նորից ասպարէղ նետւեց հայկական հաքը:  
Բայց այդ բոլորը գեռ սաղմային գրութեան մէջ

է...։ Այն, ինչ որ երազում է Դ. Ա. Նը, եղածից անհամեմատ աւելի հեռու պէտք է գնայ նոյն ուղղութեամբ։ Դասակարգային քաղաքականութեան փոխարկէն մենք պէտք է «խելամուտ լինենք հայի ազգային քաղաքականութեան» (ինչ գեղեցիկ ոճեր են, պ. Անուն)։ Դասակարգային կախը, դասակարգային ներկայացուցչութիւնը պէտք է փոխարինւի ազգային կուով և ազգային ներկայացուցչութեամբ։ Այն, ինչ պատմում է մեզ Դ. Ա. Նը, «երկադեան» դասակարգային կուի մասին, որ նա պէտք է մզէ մի կողմից ընդհանուր պետական հաստատութիւնների մէջ, միւս կողմից ազգային ժողովներում, — ըսկ պատրանք է, անմիտ հէքիաթ է, դատարկ ինքնախարէկութիւն։ Ազգային տեսակէտը, ազգային ներկայացուցչութեան սկզբունքը ունեն իրենց ներքին լոգիկան։

Հետաքրքրական է և բնորոշ, որ ազգային-կուլտուրական աւտոնոմիայի կողմանկիցներից ոմանք ազգային ներկայացուցչութեան սկզբունքը հասցնում են մինչև այնտեղ, որ պահանջում են երկրորդ պալատ հիմնել խառը պետութիւնների մէջ, որտեղ բոլոր ազգերը պէտք է հաւասար թւով ներկայացուցիչներ ունենան։ «Ազգային միութիւնները, — գրում է, օրինակ, Կ. Կուլչիցին, — և նրանց սեյմերը կարող էին հիմք ծառայել երկրորդ պալատ կազմելու համար խառը ազգային կազմ ունեցող պետութիւնների մէջ... Շվեյցարիայում և Միացնալ նահանգներում ամեն մի կանոն և շտատ, անկախ իր բնակիչների թիւց, ուղարկում է վերին պալատը հաւասար թւով ներկայացուցիչներ իրեւ հակակիւ աւելի մեծ ազգաբնակութիւն ունեցող կանոններին ու շտատներին, որոնք ներքին պալատում աւելի շատ, պատգամաւորներ ունեն։ Խոկ մի քանի ազգերից բաղկացած պետութիւնների մէջ կարելի էր կազմակերպել երկրորդ պալատ, հրաւիրելով ամեն մի ազգից հաւասար թւով ներկայացուցիչներ։ \*）

<sup>1)</sup> Կ Կուլչիցկի. „Автономія и федерація в современныхъ конституционныхъ государствахъ. Դա այն Կուլչիցին է, որ ի միջի ալլոց հաւասարնում է, թէ ազգային-կուլտուրական աւտոնոմիայի հանձնարեղ զիւտը յդացել է ինքը և արծարծել է իր դասախոսութիւնների մէջ Շվեյցարից շատ առաջ։

Զէք գտնում արգեօք, պ. Անանուն, որ Կուլչիցին միանգամայն հետեղական է և որ նրա երկրորդ պալատը աւելի շօշափելի գարանտիա կը լինէր ձեր ազգային աւտոնոմիայի համար։ Եւ չի կարելի արգեօք սպասել, որ դուք «վաղ թէ անագան», գարգացնելով ձեր սպեցիֆիկ «դեմոկրատիզմը» կը գաք խարսխելու այդ երկրորդ պալատի խաղաղ նաւահանգստում։

Միրում ենք յուսալ...

Դ. Ա. Նը ասում է, որ ազգային կուլտուրական աւտոնոմիան նորութիւն չէ հայերիս համար, որ—թէև սալմային դրութեան մէջ—մենք ունենք արդէն այդ աւտոնոմիան։ Այդ, ի հարկէ, իրողութիւն է։ Բայց ինչ է տւել մեզ մինչև այժմ հայկական աւտոնոմիան։

Մինք շատ անգամ լսել ենք առանձին հայ անհատների կողմից մի յուսահատ բացականչութիւն։ «Ի՞նչ տիրացու ազգ ենք հայերս»... Եւ դա մի աղաղակող ճշմարտութիւն է։ Տիրացուութիւնը մեզ խեղդում է, Վերցրէք մեր ժողովրդական ուսուցչին, մեր հասարակական գործիչներին, հրապարակախօսներին, վիպասաններին, նոյն իսկ բանաստեղծներին։ Վերցրէք մեր դպրոցը, մեր մամուլը։ Ամեն տեղ սարսափելի տիրացուութիւն։ Մեր ամբողջ հասարակական կեանքը կպած է տէրտէրների փարաշաներից, ամեն ինչ պտտում է էջմիածնի շուրջը։ Ոչ մի հետաքրքրութիւն դէպի քաղաքական հարցերը, դէպի պետական կեանքը, դէպի նոյն իսկ տեղական ինքնավարութեան օրգանները։ Թերթեցէք մեր պարբերական հրատարակութիւնները (մանաւանդ մինչև 1905 թիւը. այդ թիւը շատ բան փոխեց մեր կեանքում) և դուք կը տեսնէք, որ բացի ծխական, հոգաբարձական, քահանայական հարցերից ոչ մի հարց, ոչ մի հետաքրքրութիւն։ Ինչով բացատրել հայկական այդ տիրացուութիւնը և ապղիտիզմը։ Համաձայնեցէք, որ այդ բոլորը, եթէ չսասենք ծնունդ է հայկական ազգային-կուլտուրական աւտոնոմիայի, գոնէ՝ շատ սերտ կերպով կապւած է նրա հետ։

Մեր հարևան վրացիները չեն ունեցել իրենց էջմիածնը և աւելի կապւած են եղել ընդհանուր պետական կեանքի հետ։ Շմատ բան են կորցրել արգեօք դրանից։ Եթէ համեմատէք վրաց ժողովրդական ու-

սուցչին հալ «վարժապետի» հետ, վրաց հրապարակախօսին հետ և աղյուս, դուք կը տեսնէք, որ վրացիները թէ իրենց ընդհանուր զարգացումով և թէ մանաւանդ հասարակական-քաղաքական հասունութեամբ շատ աւելի բարձր են, քան հայերը: Վեցը էք ընդհանրապէս վրացական հասարակական կեանը և հայկական կեանքը: Իւրաքանչիւր հայ, չը նայած հայկական աւանդական գոռողութեանն ու մեծամտութեանը, պէտք է խոստովանի, որ վրացիները շատ աւելի առաջ են հայերից: Բաւական է յիշեւ, ինչ գեր կատարեցին մի կողմից հայերը, միւս կողմից վրացիները 1904—6 թւականների ազատագրական շարժման ժամանակ:

Ի հարկէ, մեր համեմատութիւնը շատ սահմանափակ և պայմանական նշանակութիւն ունի: Հայկական և վրացական կեանքի տարրերութիւնները ամենից առաջ որոշ տնտեսական-դասակարգային յարաբերութիւնների և որոշ քաղաքական գործոնների արդիւնք են: Բայց, որչափ գեր են կատարում առհասարակ դպրոցները, մամուլը, ազգային-կուլտուրական հաստատութիւնների այս կամ այն ձեւ, — չի կարելի ժիտել, որ հայերի յետամացութեան, ապոլիտիզմի և տիրացուութեան մէջ մեծ գեր է խաղացել եջմիածինը, մեր «սաղմային» ազգային-կուլտուրական աւտոնոմիան:

Դ. Ա. Ա. և իր կողմակիցները, երազելով լայնացնել և յաւերժացնել ազգային-կուլտուրական աւտոնոմիան, ցուց են տալիս, որ իրենք էլ եջմիածնի գոհերն են, իրենք էլ կրում են իրենց ճակատին տիրացուութեան դրօշմբ:

Բայց եթէ այդքան մվասակար է եղել ազգային-կուլտուրական աւտոնոմիան մընչ այժմ, նա շատ աւելի մվասակար կը լինէր յետագայում թէ հայերիս համար և թէ առհասարակ ազատ Ռուսաստանում: Եւ այդ այն պատճառով, որ մեր կեանքում երեան է եկել մի նոր դասակարգ՝ բանւոր դասակարգը, որի համար, մանաւանդ նրա զարգացման սկզբի շրջանում, չը կայ աւելի մեծ թշնամի, քան նացիոնալիզմը, քան ազգային բաժանումները և այդ բաժանումներն ամրացնող ու սրբագրծող հասարակական-պետական ձեռքը:

Դ. Ա. Ա. ազգային-կուլտուրական աւտոնոմիան ընոր խօսք» է յայտարարում մարքսիզմի համար և հակադրում է այն «հին» և «անհիւթ» պահանջներին, որ մինչև այժմ պաշտպանել են մարքսիստները:

Թէ որոնք են այդ «հին» պահանջները, մասամբ արդէն պարզ պէտք է լինի ընթերցողի համար մեր գրածներից: Բայց աւելորդ չէր լինի, կարծում ենք, տալ այսուեղ այդ պահանջների համառօտ ձևակերպութիւնը:

Հակառակ սոցիալ-նացիոնալիստների համոզմունքին, որոնք իրենց ազգային-կուլտուրական «համադարձմանով» խոստանում են միանգամայն «լուծել» ազգային հարցը կապիտալիստական հասարակարգի մէջ, հետեւղական մարքսիստները յայտարարում են, որ ազգային կորիւը և ճնշումները անկարելի է վերացնել քանի գեռ գոյութիւն ունի մասսաների ճնշման ու շահագործման վրայ հիմնաւծ այժմեան հասարակակարգը: Ով խոստանում է աւելին հալածւող ազգերին, նրա արածը կամ խարերայութիւն է կամ ինքնախարէութիւն: Բանւոր դասակարգը կարող է միայն իր դասակարգային կուռվ, իր որոշ քաղաքական պահանջներով դիմագրել ազգային ճնշումներին և մեղմել ազգային թշնամութիւնն ու բաղխումները: Դրա համար լաւագոյն գրաւականը — գեմոկրատիայի լիակատար լազմական է:

Դեմոկրատական պետութիւնից բանւոր դասակարգը պահանջում է ամենից առաջ մտցնել սահմանադրութեան մէջ այն հիմնական կէտը, որ օրէնքի առաջ կատարեալ հաւասարութիւն տրւի ամեն մի քաղաքացու, անկախ նրա ազգութիւնից, ինչպէս նաև կրօնից ու սերից: Սահմանադրութեան համաձայն ապօրինի պէտք է ճանաչւի և անգործադրելի մեայ օրէնսդրական թէ վարչական հաստատութիւնների ամեն մի կարգագրութիւն, որը խախտում է ազգերի իրաւահաւասարութեան սկզբունքը կամ ուղղւած է

այս կամ ո՞յն ազգային փոքրամասնութեան դէմ: Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք պէտք է ունենայ պատասխանատութեան կանչելու սահմանադրութիւնը խախտողներին:

Ապագայ ազատ Ռուսաստանում պէտք է տեղի ունենան վարչական նոր բաժանումներ։ Տեղական մանր շրջանների, գաւառների, նահանգների սահմանները պէտք է փոխւեն, ի նկատի առնելով, բացի տնտեսագործության առաջնային դաշտերից, նաև բնակչութեան կան ու կենցաղային պայմաններից, նաև բնակչութեան պազարային կազմը։ Այդ բոլորը պէտք է կատարվի համաձայն տեղական ազգաբնակութիւնների որոշման։

Քաղաքական կենդրունացման հետ միաժամանակ  
մենք պահանջում ենք վարչական և գատարանական  
գործի ապակենդրունացում: Դա նշանակում է, ի միջին  
այլոց, որ բոլոր պաշտօնեաները և գտառաւորները  
ընտրւում են ժողովրդի կողմից և պատասխանատու  
են օրէնքի ու իրենց ընտրողների առաջ: Մենք պա-  
հանջում ենք լայն տեղական ինքնավարութիւն և գլ-  
րանից զատ՝ ըրջանային ինքնավարութիւն (областное  
самоуправление) այն տեղերի համար, որոնք տար-  
բերում են իրենց տնտեսական ու կենցաղային պայ-  
մաններով և ազգային կազմով: Այս բոլորը, մօտեցնե-  
լով պաշտօնեաներին, գատառուներին և պետական  
հիմնարկութիւնները տեղական ժողովրդին, նկատելի  
չափերով կը թուլացնի գերակշռող ազգի բիւրոկրա-  
տիզմի և նացիոնալիզմի վտանգը:

Սահմանադրութիւնը պէտք է ճանաչի լեզուների  
կատարեալ աղատութիւն գրականութեան մէջ, հրա-  
պարակական ժողովներում, դպրոցներում, դատարան-  
ներում և այլ պետական հաստատութիւնների մէջ:  
Տեղական ինքնավարութեան օրգանները, որոնց ձեռ-  
քին ամենից առաջ կը գտնի դպրոցական գործը, հա-  
մաձայն զգացնող կարիքի, բացում են թէ խառը և թէ  
ազգային դպրոցներ, և այդ դպրոցները պահում են  
հաւասար պայմաններում՝ ընդհանուր պետական հաշ-  
տով: Իւրաքանչիւր մի կարգադրութիւն կամ գործողու-  
թիւն, որ խախտում է լեզուների ազատութեան իրա-  
ւահաւասարութեան սկզբունքը կամ զասում է ազ-  
գային փոքրամասնութեան շահերին դպրոցական գոր-  
ծում, այս դէպրում էլ պէտք է ճանաչի ապօրինի, և

մեղաւոյները պէտք է ենթարկեն դատարանական պատասխանատութեան:

Բացի այդ մենք պահանջում ենք, որ պետական սահմանադրութիւնը երեխաւորի ազգերի ինընորոշման իրաւունքը: Դա նշանակում է ամենից առաջ, որ եթէ մի որևէ ազգութիւն՝ օրիենտացիւ-տնտեսական, թէ սուրբեկտիւ-հոգեբանական պատճառներով՝ չի կարող կամ չի ցանկանում մի ժողովուրդ կազմել ուստի և միւս ազգերի հետ միասին, —նրան սահմանադրութիւնը իրաւունք պէտք է տայ բաժանելու և ինքնուրոյն պետութիւն կազմելու: Մենք այդ տեսակ բաժանումն չենք բարողում և չինք առաջարկում ներկայումս ոչ մի ազգութեան Ռուսաստանում, բայց ինքնորոշման իրաւունքը ճանաչում ենք, ինչպէս, օրինակ, ճանաչում ենք խօսքի ազատութեան կամ խղճի ազատութեան իրաւունքը:

Կարող է պատահել, որ մի որևէ շրջան կամ  
ազգութիւն չը բաւականանայ շրջանային ինքնավա-  
րութեամբ և պահանջի աւտոնոմիա իր համար: Այդ  
իրաւունքը պէտք է ապահովէ սրան սահմանադրու-  
թեան ինքնորոշման պահանջը:

Ահա այն ծրագիրը, որ Դ. Ա-նը յայտարարում է «նացած», «անհիթ» և «աննպատակայարմար» և որի փոխարէն նա առաջարկում է մեզ ընդունել իր «նոր» ու հիւթափ ազգային-կուլտուրական աւտոնոմիան:

Ո՞չ, պ. Ա-նուն, մենք գերադասում ենք դաւա-  
նել մեր «հին» և «անհիւթ», բայց մարդքախտական  
ծրագիրը, թողնելով ձեզ ազատ վայեկելու նացիոնա-  
լիզմի «հիւթալի» պատառները:

Բայց իսկապէս «նոր խօսք» է արգեօք ազգային-  
կուլտուրական աւտոնոմիան։ Աւաղ, այստեղ էլ Դ.  
Ա.-նը շատ հեռու է ճշմարատոթիւնից։ Ազգային-կուլ-  
տուրական աւտոնոմիան, պէտք է ասել, բաւական  
պառաւած օրիորդ է։ Դ. Ա.-նը թագժնում է նրա տա-  
րեքը որպէս զի հեշտութեամբ ամուսնացնի այդ պա-  
ռաւած օրիորդին։ Երևակայեցէք. նա աւելի մեծ է  
տարիքով, քան մեր «հին» յայտարարւող ծրագիրը։  
Ազգային կուլտուրական աւտոնոմիայի պահանջը առա-

ջաղբւել է Աւտորիայում Բրիւնի պարտայտագում \*)  
1899 թւին, երբ ոռու մարքսիստների ծրագիրը դեռ  
գոյութիւն չի ունեցել: Յետոյ 1903 թւին, երբ ըն-  
դունուում էր այդ ծրագիրը, հրէայ մարքսիստները  
հանդէս են եկել ազգային-կուլտուրական աւտոնոմիայի  
պահանջով, բայց Ռուսաստանի մաշրսիստների համա-  
գումարը մերժել է այդ՝ որպէս նացիոնալիստական  
պահանջ: Եւ հէնց այդ է եղել պատճառներից մէկը,  
որ հրէայ մարքսիստները հեռացել են կուսակցու-  
թիւնից:

Ինչպէս տեսնում էր, Դ. Անի աւտոնոմիան ոչ  
միայն պառաւած, այլ և բաւական վարկաբեկւած  
օրիորդ է: Շատ դժւար է, պ. Ա. նուն, մեր ժամա-  
նակներում ամուսնացել մի այդ տեսակ օրիորդի, մա-  
նաւանդ ըանլոր փեսացուներ գտնել նրանց համար...»

Բայց ինչո՞ւ է նոր թւում Դ. Ա. նին ազգային-  
կուլտուրական աւտոնոմիայի պահանջը: Դա կարելի է  
բացատրել նախ՝ նրանով, որ ինքը, Դ. Ա. նը, երեխ  
նոր է ծանօթացել այդ պահանջի հետ (և երեխ «յայտ-  
նի վրաց մարքսիստի» գրքոյկից): Եւ ապա՝ դա նորը  
է այն մտքով (ինչպէս այդ բացատրեց Դ. Ա. նին և  
նրա բարեկամ Ա. Մարտունին «Մշակի» մէջ), որ տի-  
րող բէակցիայի ազդեցութեան տակ մարքսիստական  
ինտելիգենցիայի նացիոնալիստական-օպպորտիւնիս-  
տական տարրերը զլուխ բարձրացըրին և ուրիշ «նոր»  
խօսքերի հետ միասին հնչեցըրին և այդ նացիոնալիս-  
տական պահանջը:

Խօսելով վրացի մարքսիստների այդ «նոր» պա-  
հանջի մասին և, ի հարկէ, խիստ կերպով ընսադա-  
տելով այն, մեր վետերան և ուսուցիչ Գ. Պլեխանովը  
գրում էր, ի միջի այլոց, հետեւալը, «1905—6 թւա-  
կանների յեղափոխական շրջանում մենք տեսնում  
էինք կովկասում, որ նացիոնալիստական կուսակցու-  
թիւնները յարմարում էին մեզ, սոցիալիստների ա-  
մառնական պահանջը»:

\*) Պէտք է աւելացնել, որ այդ պահանջը մերժել է պար-  
տայտագի կողմէց: Փոխանակ էրստերթստորիխական աւտոնոմի-  
այի, համագումարը ընդունել է տերթիստորիխական ազգային-  
կուլտուրական աւտոնոմիա, որ բոլորվին այլ բան է:

հակառակը—սոցիալիզմը ուզում է յարմարւել նացիո-  
նալիզմին: \*)

Վրաց «յայտնի մարքսիստը» և նրա մի քանի  
ընկերները շատ վաղուց է, որ վարակւած են նացիո-  
նալիզմի ախտով: Բայց ան ժամանակ, երբ կովկա-  
սեան բանտորների կազմակերպւած բանակը ինքն էր,  
որ վճռում էր իր ծրագրային ու տակտիկական խըն-  
դիրները, նրան հեշտ չէր մոլորեցնել ազգային հար-  
ցում: Նրանց բուռն ջանքերը (մանաւանդ 1906 թւա-  
կանի յայտնի կովկասեան համագումարից առաջ և այդ  
համագումարում) ընդունել տալու բանտորներին իրենց  
նացիոնալիստական պահանջները՝ ի գերեւ անցան:\*\*) )  
Իսկ այժմ, երբ բէակցիայի շնորհիւ ինտելիգենտա-  
կան խմբակները ինքնազլուխ որոշումներ են կայաց-  
նում բանտորների անունից, նրանք, ի հարկէ, աւելի  
համարձակ կերպով սկսեցին հնչեցնել իրենց նացիոնա-  
լիստական քարոզը:

Ոչ, պ. Ա. նուն, մի անգամ էլ կասենք՝ ձեզ ենք  
թողնում «նոր խօսքը»: Մենք գերադասում ենք մեր  
«հին», «անհիւթ» և «աննպատակայարմար» բայց...  
մարքսիստական ծրագիրը:

\*) Բաւեկան է յիշել «գաշնակցութեան» օրինակը: Կու-  
սակցութիւնը, որ 1902—3 թւականներին «գաւաճաններ» էր ան-  
ւանում մարքսիստներին, և բանտորական հարցը «մոդայի հարց» էր  
համարում կովկասում, 1905—6 թւականներին յայտարարեց իրեն  
սոցիալիստական կուսակցութիւն: Մենք ենք, որ կանք, իսկա-  
կան սոցիալիստները, ասում էին գաշնակցականները: Հանգույցեալ  
ե. Թոփիեանը գրում էր նոյն իսկ, որ «գոյացնեալ ժամանակակիցները»: Խանգույցեալ  
ենչո՞վ է տարրերում ինքզինքը մարքսիստ յորջորջող Դ. Ա. նը  
նացիոնալիստ նորիզոնականներից: Նա յայտարարում է այսօր,  
երբեք նոր խօսք մարքսիզմի համար, մի պահանջ, որի տակ երկու  
ձեռքով էր ստորագրի ամեն մի նորիզոնական, ամեն մի դաշնակ-  
ցական: Իսկ մենք միամտարար կարծել ենք միշտ, որ մարքսիստը  
մի որեւ բանով պէտք է զանազանւի գաշնակցականից... գոնէ  
ազգային հարցում...

\*\*) Այդ շրջանում մեծ ծառայութիւն մատուցեց կովկասեան  
բանտորութեանը II Պետական Դումայի նախկին անդամ հանգու-  
յցեալ Սըչէլ Զափարիձէն: Նա միակն էր վրաց «փոքրամանական-  
ների» լիգերների թւում, որ ըմբռնում էր մարքսութեամբ ինտեր-  
նացիոնալիզմի տեսակէտը և եռանդուն կերպով պաշտպանում էր  
համառուսական մարքսիստների ազգային ծրագիրը:

Մինչեւ այժմ մենք խօսում էինք սոցիալ-նացիոնալիստների «ազգային քաղաքականութեան մասին, և մենք տեսանք, որ այդ քաղաքականութիւնը կրում է իր վրայ նացիոնալիզմի սև դրոշմը։ Սակայն մենք բաւականաշափ պարզած չէինք լինի Դ. Անի և նրա ուսուցիչների նացիոնալիստական կերպարանքը, եթէ բաւականանայինք միայն դրանով։ Անհրաժեշտ է ծանօթանալ նաև նրանց «դասակարգային քաղաքականութեան» հետ։ Այսինքն տեսնել, թէ նրանք, մեկնելով իրենց ընդհանուր նացիոնալիստական աշխարհահայեացքից, ինչպէս են ուզում կազմակերպիլ բանտորդ դասակարգի ընթացիկ քաղաքական և տնտեսական կրիւը։ Այդ մասին Դ. Անը չի խօսում, իհարկէ, իր յօդածում, բայց նրա և իր գաղափարակիցների վերաբերմունքը այդ ինդիքն՝ մեկ քաջ յայտնի է թէ գրականութիւնից և թէ կենդանի իրականութիւնից։

Պէտք է ասել, որ այստեղ էլ՝ բանտորներին ըստ սոցգութիւնների բաժանելլ պրածին և հիմնական սկզբունքն է մեր սոցիալ-նացիոնալիստների համար։ Ամեն մի ազգութիւն ներկայացնում է «իւրայտուկ», «ապեցիֆիկ»\* միջավար, — ասում են նրանք, — տարբեր դասակարգային շերտաւորումով։ Այդ պատճառով անհրաժեշտ է, որ ամեն մի ազգի մէջ գործէ՝ ազատու աւտոնոմ կերպով այդ ազգի բանտորական կազմակերպութիւնը։ Նա կարող է և պէտք է կատած լինի ֆեղերատիւ կապերով միւս ազգերի բանտորական կազմակերպութիւնների հետ, բայց այստեղ էլ «այնուամենայնիւ անխախտ պէտք է մնայ» այն սկզբունքը, որ, օրինակ, հայ բանտորութեան դասակարգային կոիւը զեկավարում է «հայ կազմակերպութիւնը», որ այդ

կազմակերպութիւնը «միակ ներկայացուցիչն» է հայ պրոլետարիատի։

Բայց բանտորները ունեն նաև արհեստակցական միութիւններ։ Այստեղ էլ նացիոնալ-սոցիալիստները առաջ են տանում իրենց ազգային բաժանումները։ Ամեն մի ազգի բանտորութիւն պէտք է առանձին մղէ իր առօրեայ տնտեսական կոիւը՝ իր առանձին ազգային արհեստակցական միութիւնների մէջ։ Ի հարկէ, նրանք հակառակ չեն լինի զանազան ազգերի արհեստակցական միութիւնների որոշ կապերին և համերաշխ զործունէութեան, բայց այստեղ էլ «այնուամենայնիւ անխախտ պիտի մնայ» ազգային սկզբունքը։

Այդպիսով, եթէ վերցնենք խառը ազգաբնակութիւն ունեցող մի քաղաք, օրինակ՝ Բագուն, այստեղ մենք պէտք է ունենանք առանձին՝ ուստական, հայկական, թուրքական, վրացական, հրէական, երկի նաև (և ինչո՞ւ չէ) լեզգական, օսական, չեչենական և այլն ազգային քաղաքական կազմակերպութիւններ և նորքան ազգային արհեստակցական միութիւններ, որոնք բոլորը միևնույն քաղաքի, երբեմն միևնույն գործարանի բանտորների քաղաքական ու տնտեսական կոիւը պէտք է «զեկավարեն» առանձին-առանձին, ըստ ազգութիւնների։ Համաձայն սոցիալ-նացիոնալիստների յայտնի կանոնազրութեան, առանձին այդ բազմաթիւ ազգային կոմիտէները պէտք է կապւեն միմեանց հետ Փեղերատիւ կապերով, ամեն մի կոմիտէ ընտրում է, օրինակ, մէկ կամ երկու ներկայացուցիչ։ Այդպիսով կազմած ֆեղերատիւ մարմնի որոշումները պարտադիր են առանձին ազգային կոմիտէների համար այն չափով, որչափով նրանք հաւանութիւն են գտնում վերջինների իոդմից։ Եթէ մի ազգային կոմիտէ համաձայն չէ կենտրոնական մարմնի որոշման հետ, նա կարող է յետ կանչել կամ փոխարինել իր ներկայացուցիչն։ Ուրիշ խօսքով ծանրութեան կէտը գտնուում է ազգային կազմակերպութիւնների մէջ։ Այդ կազմակերպութիւնները սուվերէն են։ Եւ որ հետաքրքրական է—եթէ, օրինակ, Բագւում ուսւ կազմակերպութիւնը ունի 2000 բանտոր, հայ կազմակերպութիւնը՝ 200, իսկ թուրքականը՝ միայն 20 բանտոր և այլն, նրանք բոլորն էլ հաւասար թւով ներկայացուցիչներ պէտք է ունե-

\*). Դ. Անի նման մտածողներ այնքան յաճախ էինքործ ածում «ապեցիֆիկ» բառը, որ նրանց անունը դրին «ապեցիֆիկ-ներ»։ Թէ որքան ընորոշ էր և մատոնող նրանց համար այդ անունը, երեաց նրանից, որ նրանք միանգամայն ջնջեցին իրենց իքուիկոնից այդ բառը և խոր վերաւորանք էին համարում իրենց հասցէին, երբ հակառակորդները գործ էին ածում «ապեցիֆիկ» խօսքը։

նան ֆեղերատիւ կենդրոնում: 2000 ռուս բանւորների ձայնը պէտք է հաւասարի 200 հայ և 20 թուրք բանւորների ձայնին: Նոյնը և համառուսական կենդրոնում—օրինակ, 200,000 կազմակերպւած ռուս բանւորների ձայնին պէտք է հաւասար ճանաչւի մի 300 հայ բանւորի, կամ 40—50 թուրք բանւորի ձայնը... Դեմուկատիվմի ընդհանուր ֆորմուլան առում է՝ «մի մարդ՝ մի ձայն», բայց «սպեցիֆիկ» դեմոկրատիվմին ի՞նչ փոյթ, նա ունի իր «սպեցիֆիկ» լոգիկան, իր «սպեցիֆիկ» ֆորմուլաները:

Եւ այս խայտառակ ու այլանդակ ծրագիրներն ու կանոնագրութիւնները առաջարւում են յանուն մարքսիզմի: Եւ նրանք ապրում են ոչ միայն այդ, իրենց մարքսիստ անւանողների, հիւանդ երեսկայութեան մէջ, այլ և այդ վերջինների ջանքերով՝ տեղ-տեղ, բանւորութեան յետամաց, ազգային նախապաշտունքներից դեռ չազատուած շրջաններում, իրագործում են կեանքի մէջ: Այդպէս է, օրինակ, հրէական Բունդի բայսուում և տեղ-տեղ Աւստրիայում: Այդ տեսակ թոյլ փորձեր կատարեցին և մեր «սպեցիֆիկները» Բագրում իրենց օրապակաս «Հայ կազմակերպութեամբ» և «Հայ կատելչիկների արհեստակցական միութեամբ» (1906—7 թւականներին):

Եթէ Մարքու կենդանի լիներ, նա հազարումէկ-երորդ անգամ իրաւունք կունենար վշտացած բացա-կանչելու. «J'ai semé des dragons, et je recolte des puces»—«Ես դրակոններ եմ ցանել, և լուեր եմ հնձում»:

Ցոյց տալու համար, թէ որքան հեռու են մարքսիզմից մեր «ազգայինները», բաւական է բերել մի կտոր Մարքսի և էնգելսի «Մասնիքեանուից», որը մինչեւ դրա չի դադարել աւետարան լինելուց ամեն մի մարքստիփար համար:

«Կոմմունիստները (այսինքն մարքսիստները),— ասում են գիտական սոցիալիզմի մեծ ուսուցիչները, — տարբերում են ուրիշ բանւորական կուսակցութիւններից Միայն նրանով, որ, մի կողմից, զանազան ազգերի պատկանող պրոլետարների շարժման մէջ նրանք գերի պատկանում պրոլետարների շարժման մէջ նրանք զոկում և պաշտպանում են ամբողջ պրոլետարիատի համար ընդհանուր, ազգութիւնից կախում չունեցող

շահերը, միւս կողմից՝ զարգացման այն տարբեր ֆազիսներում, որոնցով անցնում է պրոլետարիատի կոխւը բուրժուազիայի դէմ, նրանք միշտ պաշտպանում են շարժման ընդհանուր շահերը՝ իրենց ամբողջութեան մէջ: (Ընդգծութեան մերն են: Ա.)

Մտածել են երբ և իցէ այս տողերի մասին միշտ «սպեցիֆիկ» պայմանների մասին աղաղակող, միշտ «ազգային առանձնայատկութիւններից» խօսող մեր րօրեամարքսիստները: Կամ երբէք չեն մտածել, կամ մտածել և ոչինչ չեն հասկացել:

Մարքսիստները,—ասում են մեր ուսուցիչները,— տարբերում են ուրիշ բանւորական կուսակցութիւններից Միայն (նորից ընդգծում ենք այդ միայն բառը) նրանով, որ, նախ նրանք միջազգային բանւորական կուսակցութիւն են և ոչ ազգային: Իետևապէս նրանք հեռու են նացիոնալիզմից: Եւ երկրորդ՝ որ նրանք միշտ ի նկատի ունեն շարժման ընդհանուր շահերը և ոչ ըստէի մոմենտի շահը. Իետևապէս նրանք հեռո՛ւ են պայորտիւնիզմից:

Նացիոնալիզմ և օպպորտիւնիզմ ահա մարքսիզմի ամենասոխերիմ թշնամիները: Եւ զարմանալու չէ, որ նրանք, երկու քոյրերի նման, միշտ կապւած ու գըրկւած են միմեանց հետ: Զարմանալու չէ, որ ազգային-կուտուրական աւտոնոմիայի պահանջը հնչում է այսօր մեր լիկվիդատոր-օպպորտիւնիստների բանակից: Զարմանալու չէ նոյնպէս, որ նոյն այդ լիկվիդատորական բանակին պատկանում է, որքան մեզ յայտնի է, և ինքը, մեր պատւական Դ. Ա.նը:

Հնթերցողը տեսաւ արդէն, որ թէ իրենց «ազգային քաղաքականութեամբ» և թէ իրենց «գասակարգային քաղաքականութեամբ» մեր աւտոնոմիստները մնում են նոյն նացիոնալիստները: Թէ այստեղ, թէ այստեղ մենք տեսնում ենք նոյն սկզբունքները, նոյն մտքերի շրջանը:

Բայց գտնուում են «սպեցիֆիկներ», որոնք հաւատարիմ մնալով իրենց սպեցիֆիկմին դասակարգային-կազմակերպչական խնդիրներում, հանդէս են գալիս այսօր Դ. Ա. նի ազգային ծրագրի դէմ (օրինակ՝ մեր յօդածում մի անգամ արդէն յիշւած Ա. Մարտունին):

Այդտեսակներին մենք կարող ենք միայն ասել, որ նրանք հետեւողական չեն: Թոյլ ենք տալիս մեզ հաւատացնել նրանց, որ իսկական «սպեցիֆիկը» Դ. Ա. նն է: Եթէ նրանք լուրջ և մինչև վերջը մտածեն իրենց դաւանանքների մասին, կամ պէտք է ամեն բանում համաձայնեն Դ. Ա. նի հետ, կամ բոլորովին երես դարձնեն «սպեցիֆիկմից»: Ուրիշ ելք, ուրիշ ընտրութիւն չը կայ նրանց համար:

Աւելորդ չէր վնի, կարծում ենք, այստեղ էլ յիշել համաւոտ կերպով, թէ ինչ են հակադրում սոցիալ-նացիոնալիստներին դասակարգային-կազմակերպչական խնդիրներում հետեւողական մարքուստները:

Նրանք էլ Դ. Ա. նի նման հաւատարիմ են իրենց հիմնական տեսակէտներին: Նրա ազգային-կազմակերպչական սկզբունքին նրանք հակադրում են տերրիտորիական միջազգային սկզբունքը: Ամեն մի քաղաքում պէտք է գոյութիւն ունենայ մի անրաժան բանուրական կազմակերպութիւն՝ մի հատ զեկավորող մարմանով, որի շուրջը պէտք է միացած լինեն այդ քաղաքի բոլոր մարքսիստ բանուրները՝ անկախ իրենց ազգութիւնից: Այստեղ էլ, ի հարկէ, մենք ընդունում ենք լեզուների ազատութիւնը և հաւասարութիւնը. բայց այստեղ էլ, ինչպէս և պետական կազմակերպութեան խնդրում, առանձին լեզուներով պրոպագանդայի ու ազիտացիայի համար անհրաժեշտ մարմինները, որ ստեղծուում են ընդհանուր կազմակերպութիւններին կից, — պէտք է կրեն կուսակցութեան մէջ մասնաւոր-

իրաւական և ոչ հրապարակական բնաւորութիւն: Այստեղ էլ մինք ժխտում ենք սոցիալ-նացիոնալիստների երազած ազգային կենդրոնացումը, որովհետև մեր կազմակերպութիւնների կենդրոնները տեղական, շրջանային և համառուսական տերրիտորիական մարմիններն են: Նրանց կազմակերպական ֆեղիրավիզմին, որ պէտք է անցնի, նրանց ցանկութեան համաձայն, վերից մինչև ներք, մենք հակադրում ենք մեր դեմոկրատական ցենտրալիզմը:

Ճիշտ նոյն սկզբունքներով մենք մօտենում ենք և արհեստակցական միութիւններին, բանւորների սպառողական ընկերութիւններին, կուլտուրական հաստատութիւններին (ակումբներին) և այլն:

Ընթերցողը հասկանում է, որ սարեր ու ձորեր են բաժանում մի կողմից՝ Դ. Ա. նին ու նրա զաղափարակիցներին, միւս կողմից՝ հետեւողական մարքսիստներին:

X

Մենք կուգէինք խօսել այստեղ նաև Դ. Ա. նի յօդածում ցըւած մի քանի այլ կարգի մարդարիտների մասին, բայց մեր յօդածը առանց այն էլ շատ երկարեց: Հետաքրքրական է, օրինակ, Դ. Ա. նի այն յայտարարութիւնը, թէ՝ Ֆեղիրացիան աւելի ձեռնաու կը լինէր մեր երկրի համար, աւելի նպաստաւոր կը լինէր տնտեսական զարգացման տեսակէտից: Բայց մենք չենք կարող, ինչպէս ասացինք, կանգ առնել այդ և մի շարք ուրիշ հարցերի վրայ:

Չենք կարող, սակայն, վերջում լուսութեամբ անցնել Դ. Ա. նի յօդածը զարդարող էպիգրաֆի կողքից: Այդ էպիգրաֆը ասում է. «Այն բանուր դասակարգը, որ հաշումը է ստորին ցեղի վիճակի հետ, չի ըմբռատանալ եւ ստորին դասակարգի վիճակի դէմ»: Այս տողերը Դ. Ա. ը վերցրել է մի մեծահատոր մանր-բուրժուական նացիոնալիստական հրատարակութիւններից, որ կոչւում է. «Формы национального движения въ современныхъ государствахъ»:

Այդ էպիգրաֆով Դ. Ա.ը ասում է հայ բանու-

ըին նոյնը, ինչ որ նա ասում է իր ամբողջ յօդւածով, և այդ տեսակէտից, պէտք է խոստովանել, Դ. Ա.-նը շատ լաւ ընտրութիւն է արել: Նա ասում է նայ բանտորին. եթէ դու ուզում ես լաւ սոցիալիստ լինել, դու պէտք է նախ և առաջ լաւ ազգասէր լինես: Եղիր նախ լաւ հայ, ապա կը լինես լաւ բանւոր: «Պաշտպանիր նախ քո ազգը, ապա կը պաշտպանես քո դասակարգը: Դա այն է, որ տասնեակ տարիների ընթացքում քարոզել են մեզ գաշնակցականները: Թող գտնի այժմ Դ. Ա. նը մի հատիկ գաշնակցական, որ երկու ձեռքով չը ստորագրէր այդ էպիգրաֆի տակ:

Հայ բանւորը, քիչ թէ շատ գիտակցութեան եկած հայ բանւորը, հենց իր գիտակցութեան գալու դառը փորձով, շատ լաւ հասկացած կը լինի, թէ որքան տըխմար ու վասակար միտք է պարունակուում այդ տողերի մէջ: Հայ բանւորը գիտէ, որ պէտք է կուել ազգային բռնութիւնների դէմ, բայց նա գիտէ, որ այդ մի առանձին կոիւ չէ «ստորին ցեղի» վիճակի դէմ, որից յետոյ նա պէտք է նոր ըմբռստանայ «ստորին գասակարգի» վիճակի դէմ,—այդ հենց ինքը, իր առօրեայ գասակարգային կոիւն է:

Ճիշտ Դ. Ա.-ի նման, օրինակ, բուրժուական ֆեմինիզմը քարոզում է կանանց, եթէ ուզում էք գիտակից քաղաքացուհիներ լինել, նախ կուեցէք տղամարդկանց գերիշխանութեան դէմ, բոլորեցէք «ստորին սեռի» վիճակի դէմ: Բայց գիտակցից բանւորուեիները երես են գարճում բուրժուական տիկինների այդ քարոզներից: Ինչու: Միթէ նրանք հաշտուում են «ստորին սեռի» վիճակի հետ, երբէք: Բայց նրանք գիտեն, որ կանանց հարցն էլ ընդհանուր դասակարգային հարց է, որ կապւած է նոյն սոցիալա ան արժաների հետ: Նրանք գիտեն, որ միայն ձեռք ձեռքի տած իրենց ամուսինների ու եղբայրների հետ, ընդհանուր դասակարգային կազմակերպութիւնների մէջ և ընդհանուր դասակարգային կուի միջոցով՝ նրանք կարող են հասնել իրենց նպատակներին:

Այս բոլորը, ինչպէս երեւում է, — «հիգա զա սեմ յու պечատյամ»: Դ. Ա.-ի համար:

Եթէ մենք ուզենայինք մի էպիգրաֆ ընտրել մեր յօդւածի համար, Դ. Ա.-ի այդ տողերին կը հակա-

դրէինք գերմանական մարքսիստների վետերան Վիլհելմ Լիբկնեխտի հետեւեալ գեղեցիկ խօսքերը.

«Մեզ, սոցիալիստներիս համար գոյութիւն չունի ազգութիւնների խնդիրը: Մենք ճանաչում ենք միայն երկու ազգութիւն: մի կողմից՝ կապիտալիստների, բուրժուազիայի, իշխող դասակարգի ազգութիւնը, իսկ միւս կողմից՝ պրոլետարների, բախտից հայ լածւածների, բանւոր դասակարգի ազգութիւնը... Բուլոր երկրների բանւորները կազմում են մի ազգութիւն՝ հակառակ միւս ազգութեան, որը նոյնպէս մի է բոլոր երկրներում»:

Որքան Դ. Ա.-ի էպիգրաֆի մէջ շեշտւած է նացիոնալիզմի նեղ ու յետադիմական գաղափարը, նոյնքան գերմանական պրոլետարիատի հոյակապ մարտիկի այս տողերի մէջ շեշտւած է միջազգայնութեան լայն ու լուսաւոր գաղափարը:

Մեր յետամաց ու նեխւած իրականութեան հարազատ զաւակ Դ. Ա.-ների համար դժւար կը լինի բմբռնել այդ տողերի խոր ու իրական իմաստը: Նրանք անպայման—և այդ լաւագոյն գէպքում—որոշ չափազանցութիւն ու ֆրազա կը նկատեն Լիբկնեխտի խօսքերի մէջ: Մեր կեանքում գեռ նոր են զարգանում այն միջազգային սոցիալական յարաբերութիւնները, որ հեշտ ըմբռնելի պէտք է գարճնէին—նոյն իսկ բժամիտների համար—միջազգայնութեան բարձր գաղափարները: Մի մարդուց, սակայն, որը յաւակնութիւն ունի իրեն մարքսիստ անւանելու, կարելի էր պահանջել որ նա այդ սատիճան կուրացած չը լինի այսօրւան օրով, այն էլ զուտ հայկական այսօրւան օրով, այլ կարողանայ նկատել այսօրւայ մէջ նաև վաղլան տարրերը:

Մեր շնորհալի բանաստեղծ (և, ասենք փակագըծում, վատ հրապարակախօս) Յովհ. Թումանեանը խօսում է մի տեղ այն «չիքերի» մասին՝

Որոնք, անտեղեակ առաջին լոյսին,  
Չեն հրձւում նրա ծագման հանդէսով,  
Այլ միայն կէսօրին, ապօւշ երեսով,  
Ելնում են յանկարծ, տեսնում քնչած  
Գլխների վերև արևը կանգնած...

Մենք, հետեւողական մարքսիստներս, հպարտ ենք  
այն գիտակցութեամբ, որ երբ միջազգայնութեան ա-  
րել լուսաւորած կը լինի մեր երկնակամարը, նա մեզ  
չի գտնի, յամենայն դէպս, ը բանաստեղծի ասած «Հի-  
քերի» և «ապուշների» աննախանձելի վիճակում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0200831

